

Աշխատանքի մասին

Նախարար

Գլուխ 1.

Խորհրդարանական դնտրություններում
դնտրողների իրավական կարգավիճակի
սահմանադրական հիմունքները

Գլուխ 2.

Խորհրդարանական դնտրություններում
պատզամավորության թեկնածուների
իրավական կարգավիճակի հիմունքները
« 2.1.

Պատզամավորության թեկնածուներին առաջադրվող
սահմանադրական պահանջները

« 2.2.

Պատզամավորության թեկնածուներին
ընթացիկ օրենսդրությամբ առաջադրվող պահանջները
« 2.3.

Պատզամավորության թեկնածուների իրավական
կարգավիճակը նախարարական քարոզչության ընթացքում

**Ֆ. ԹՈԽԵԱՆ
Լ. ՍԻՄՈՆՅԱՆ**

**Խորհրդարանական ընտրություններում ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների
սահմանադրական-իրավական կարգավիճակը**

Այս աշխատանքը նվիրված է արդի սահմանադրական տեսության կարևոր իրավական ինստիտուտի՝ խորհրդարանական ընտրությունների մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությանը:

Համեմատական իրավագիտության մեթոդով վերլուծված է մոտ 30 երիտասարդ ժողովրդավարության երկրների խորհրդարանական ընտրություններում ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների սահմանադրական-իրավական կարգավիճակը: Հատուկ ուշադրություն է դարձված << Ազգային ժողովի ընտրություններին ընտրողների և պատգամավորության թեկնածուների սահմանադրական-իրավական կարգավիճակի լուսաբանմանը, արված են որոշ առաջարկություններ ընտրական օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Գրքույկը կարող է օգտակար լինել պատգամավորների, պետական ծառայողների, իրավաբանական և քաղաքագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների, ընտրությունների հիմնախնդիրներով հետաքրքրվող ընթերցողների համար:

Խորհրդարանական ընտրություններում ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների սահմանադրական-իրավական կարգավիճակը

Նախաբան

Քաղաքական իշխանությունը պատկանում է ժողովրդին: Միայն ժողովուրդն է հանդիսանում իշխանության կրողը (տերը) և միակ աղբյուրը: Այս դասական ձևակերպումն արտահայտում է ժողովրդավարության, ժողովորի ինքնիշխանության էությունը: Իրեն պատկանող քաղաքական (կամ պետական) իշխանությունը ժողովուրդն իրագործում է հիմնականում երկու ձևով. առաջին՝ ուղղակի, անմիջական ժողովրդաիշխանություն, երկրորդ՝ անուղղակի, ներկայացուցչական ժողովրդաիշխանություն:

Ուղղակի, անմիջական ժողովրդակիշխանություն իրագործելիս՝ ժողովուրդը հանդես է գալիս որպես իշխանության միակ տերը (կրողը), իսկ ներկայացուցական ժողովրդակիշխանություն իրագործելիս՝ որպես իշխանության միակ աղբյուրը: Ժողովրդավարական և ժողովրդակիշխանության իրագործման վերոնշյալ ձևերն ամրագրված են արդի աշխարհի պետությունների սահմանադրություններում:

Ժողովրդավարության գլխավոր սկզբունքը (այն, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին) ամրագրված է «Սահմանադրության 2 հոդվածում։ Ըստ Էռլյան, «Սահմանադրության մյուս բոլոր դրույթները ծառայում են այս գերազույն պահանջի իրականացմանը։ Նույն հոդվածի երկրորդ մասում սահմանվում են ժողովրդահշխանության իրականացման ուղղակի, անմիջական (ազատ ընտրություններ, հանրաքվեներ) և ներկայացուցչական ու միջնորդավորված ձևերը՝ իշխանության իրականացումը։ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով։ Ժողովրդահշխանությունը, որպես պետության կարևորագույն հատկանիշ, բնութագրում է ոչ միայն պետության էռլյունը, այլ նաև այն եղանակների, մեթոդների և ձևերի ամբողջությունը, որոնց միջոցով պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունները։ Այս արտացոլում է մարդու, քաղաքացու իրավունքների երաշխավորվածության ու պաշտպանվածության իրավական աստիճանը։

Այսպիսով, ազատ ընտրությունները ժողովրդավարության, ժողովրդահիշխանության իրականացման կարևորագույն՝ անմիջական, ուղղակի ձևն է¹:

Ընտրական իրավունքը՝ դա սահմանադրական իրավունք է, և սահմանադրության տեսության մեջ ընտրական իրավունք ասելով՝ հասկացվում է իրավական նորմերի ամբողջություն, որն ամրագրում է քաղաքացիների ընտրելու (ակտիվ) և իշխանության ներկայացուցչական մարմիններում ընտրվելու (պասիվ) ընտրական իրավունքը։ Որոշ տեսաբաններ ավելի ընդգրկուն մոտեցում են ցուցաբերում՝ սահմանելով ընտրական իրավունքները և որպես դրա նաև՝ ակտիվ ու պասիվ ընտրական իրավունքները։ Նրանց կարծիքով »ընտրական իրավունքներն իրավունքների խումբ են, որոնք ապահովում են քաղաքացիների մասնակցության հնարավորությունը պետության և տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների ձևավորմանը, ինչպես նաև անմիջական ժողովրդավարության ընթացակարգերին (ժողովրդական նախաձեռնություն, հանրաքվե, ետևանք և այլն)։ Այդ իրավունքներից են առաջին հերթին ակտիվ ընտրական իրավունքը կամ ձայնի իրավունքը, որը երեմն կոչում են նաև ընդհանուր ընտրական իրավունք, ապա՝ պասիվ ընտրական իրավունքը կամ ընտրվելու իրավունքը և, վերջապես՝ ընտրական մարմինների ձևավորմանը, պատգամավորության թեկնածուների առաջադրմանը մասնակցելու, ընտրովի ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց ետևանքի նախաձեռնությանը հանդես գալու, առարկությունների, ընտրությունների արդյունքները բողոքարկելու և այլ իրավունքները«²։

Քաղաքացիների այս սահմանադրական իրավունքները հանդիսանում են իհմնարար, և դրանց իրացումն ապահովում է քաղաքացիների՝ ընտրական գործընթացի տարբեր փուլերում իրականացվող մի շարք կոնկրետ իրավասություններով և պարտականություններով։

Ինչպես և ցանկացած իրավաբանական գործընթաց, ընտրական գործընթացը՝ դա և որոշակի գործունեություն է, և այդ գործունեությունը կազմավորող իրավական նորմերի համակարգ։ Սահմանադրական տեսության մեջ ընտրական գործընթացը սահմանվում է որպես անհատների, մարմինների, կազմակերպությունների և խմբերի՝ օրենքով և սոցիալական նորմերով կարգավորվող գործունեություն՝ ուղղված ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը³։ Լինելով նորմատիվ կարգավորվող՝ այդ գործունեությունը կանոնակարգված է և բաղկացած որոշակի, սահմանված հաջորդականությամբ դասավորված փուլերից (ընտրատարածքների և ընտրական տեղամասերի ձևավորում, ընտրական հանձնաժողովների կազմավորում, ընտրողների գրանցում, պատգամավորության թեկնածուների առաջադրում, նախընտրական քարոզություն, քվեարկություն, ձայների հաշվարկ և ընտրությունների արդյունքների ամփոփում, ընտրությունների հնարավոր երկրորդ փուլ կամ նոր ընտրություններ, ընտրությունների վերջնական արդյունքների պարզում և ընտրությունների արդյունքների պաշտոնական իրապարակում)։

Խորհրդարանական ընտրություններում ընտրական գործընթացի սուբյեկտներից են ընտրողները, պատգամավորության թեկնածուները, նրանց ներկայացուցիչները (Վստահված

² Տես. Է՛ ի հօեծօօէ ի ի ա (ա՛ հօալծոնալ ի ա) ի ծակ չածալայ ն օ հօծալ . Օ հա է է. Ա 4-օ օ ա օ. Ծ ի ա 1-2. Ի օ ծա ա Ա Ա. Ն ծա օ օ լ ։ Ե չ ա Ա Ա, 1995, է 139-140:

անձինք, լիազոր ներկայացուցիչները և այլոք), կուսակցությունների միավորումները (ընտրական բլոկներ, ընտրական միավորումներ և այլն), դիտորդները, ընտրական համձնաժողովները, դատարանները և այլն:

Քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրենց սահմանադրական բազային իրավունքներն իրականացնելիս հանդես են գալիս որպես ընտրական գործընթացի տարբեր սուբյեկտներ. ակտիվ ընտրական իրավունքի դեպքում՝ որպես ընտրողներ, պասիվ ընտրական իրավունքի դեպքում՝ թեկնածուներ:

Ակտիվ ընտրական իրավունք ասելով հասկացվում է քաղաքացիների ծայնի իրավունքը, իշխանության ներկայացուցչական մարմնի կազմավորմանը մասնակցելու հնարավորությունը: Ակտիվ ընտրական իրավունքը՝ դա քաղաքացիների սահմանադրական իրավունք⁴ է ընտրել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Պասիվ ընտրական իրավունքը ներկայացուցչական իշխանության մարմնի կազմում կամ ընտրովի պաշտոնում անծանթ ընտրվելու քաղաքացիների հնարավորությունն է, որը վերապահվում է յուրաքանչյուր քաղաքացու, սակայն իրագործվում է սակավաթիվ ընտրողների կողմից:

Աշխարհի բոլոր պետություններում տվյալ երկրի Սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ կարգավորվում են ընտրական իրավունքի ակտիվ և պասիվ եղանակներ՝ սահմանելով որոշակի բնույթի պայմաններ (սահմանափակումներ): Դրանք կոչվում են ընտրական ցենզեր: Այդ ցենզերը (պահանջները) լինում են ընդհանուր, որոնք կարգավորում են քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքը, և լրացրուցիչ, որոնք պետք է բավարարեն ընտրովի պաշտոններում ընտրվող թեկնածուները:

Ընտրողի իրավական կարգավիճակը իրենից ներկայացնում է նրա իրավունքների և պարտականությունների ամբողջություն՝ կապված քվեարկությանը և օրենքով նախատեսված ու օրինական մեթոդներով անցկացվող մյուս ընտրական գործողություններին ընտրողի մասնական հետո⁵:

Հայաստանի Հանրապետությունում ընտրողի իրավական կարգավիճակի հիմքը կազմում են նրա իրավունքներն ու պարտականությունները՝ կապված Հայաստանում ընտրությունների անցկացման՝ օրենսդրությամբ սահմանված հիմնական սկզբունքների իրականացման հետ: Ընդ որում, «Համամադրության 3 հոդվածի և «Հնտրական օրենսգրքի 1 հոդվածի համաձայն՝ ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ, կամավոր

³ Սույն տեղում, էջ 340:

⁴ Όμοιως στην περιόδου της Αρχαίας Ελλάδας, οι θυσίες γίνονταν στην αρχή της θερινής εποχής, με την προσφορά της φύσης στην θεότητα, ως απόδειξη της δύναμης της φύσης στην ανθρώπινη καταστροφή.

³ Stiu É cásé ðáðáðéum í á i ðááí é è cásé ðáðáðéum ú é i ði ðáññ á ðO. Ó:ááí é eäy áðcí á. I ðá. ðáá.-ä.p .í .À. Á. È ááí -áí éí .í :. È cásé Í Í Þ Á 1999 t 151:

Իիմունքներով: Պետությունը խթանում է, որպեսզի ընտրություններն անցկացվեն մրցակցության և այլընտրանքի սկզբունքներով:

Ընտրական իրավունքի սկզբունքների այդ ընդհանրությունն է ապահովում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի ձեռքբերումը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դաշնանաքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Գլուխ 1. Խորհրդարանական դմտրություններում դմտրողների իրավական

Կարգավիճակի սահմանադրական իհմունքներ

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և աշխարհի շատ պետություններում, սահմանադրություններն ամրագրում են քաղաքացիների ընտրական իրավունքին վերաբերող մի շարք ընդիանուր պահանջներ՝ ակտիվ ընտրական իրավունքի ցենզեր⁶: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածի համաձայն՝ »Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք«: «Հ Սահմանադրության 27 հոդվածում ամրագրված է նաև, թե ովքեր չեն կարող ընտրել և ընտրվել: Սահմանադրության այս հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետում սահմանվում են պահանջներ՝ ակտիվ ընտրական իրավունք ծերք բերելու համար: Այդ նորմերը սահմանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական քաղաքական իրավունքը, որի բովանդակությունը լիովին համապատասխանում է 1948թ. Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի 21 և 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25 հոդվածների պահանջներին և այլ միջազգային իրավական նորմերի:

Կարելի է պնդել, որ տվյալ երկրի քաղաքացի և 18 տարին լրացած լինելու ցենզերը, առանց մշտաբնակության պահանջի, միջազգայնորեն ընդունված նորմեր են, և նոյնն են նաև Ուկրաինայում, Ռումինիայում, Մոլդովայում, Խորվաթիայում, Բելառուսում, Էստոնիայում, Ղազախստանում, Մակեդոնիայում, Ալբանիայում, Լատվիայում, Լիտվայում, Բուլղարիայում, Հունգարիայում, քացարությամբ որոշ երկրների (ՇՀ, Վրաստան, Ալբանիա, Սլովենիա, Չեխիա և Լեհաստան)⁷:

⁶ Štěnu mānīrīmāmāsūn Ī ēdāēāhā Ī . Ā. "Ēi í nīdēdōdēi í i ī ā ī ðāhā çāðōáhāæí û ð nīdāi NÍ Ā": Ó:āá. i ī mī aēā.- ī ī hēā. P ðēnööi, 1998, lq 240-246:

Մասնավորապես, Զեխիայում 1990 թվականի դրությամբ ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին Զեխովովակյան Հանրապետության քաղաքացիները, որոնք բնակվում էին Զեխիայում և ընտրությունների օրը դարձել էին 18 տարեկան⁸:

Իսկ Լեհաստանում մշտաբնակության պահանջն առնվազն 5 տարի է և քվեարկելու իրավունքը պատկանում է Լեհաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք այլ երկրի քաղաքացի չեն:⁹

Այսպիսով, միջազգային փորձը վկայում է, որ ընտրելու համար մշտաբնակության պահանջը, որպես հակաժողովրդավարական բնույթի տարր, հիմնականում չկա, քանի որ այն սահմանափակում է ընտրողների մեկ այլ՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը (հատկապես աշխատանքային միգրանտների, սեղոնային աշխատողների և այլն):

Սակայն քաղաքացիներն ակտիվ ընտրական իրավունքը ձեռք են բերում, եթե քացակայում են հանգամանքներ, որոնք արգելում են ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը: Հայաստանում ակտիվ ընտրական իրավունքի իրականացումը բացառող այդ հանգամանքները ևս համապատասխանում են միջազգային իրավական նորմերին: Դա այն պահանջներն են, որոնք սահմանված են << Սահմանադրության 27 հոդվածում և << ընտրական օրենքորդի 2 հոդվածի 5-րդ կետում: Համաձայն այդ դրույթների՝ »ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները»:

Քաղաքացիների կողմից ակտիվ ընտրական իրավունքի իրականացման այլ սահմանափակումներ << Սահմանադրությունը և << ընտրական օրենսգիրքը չեն նախատեսում:

Ուսաստանի Դաշնությունում, ՈԴ Սահմանադրության 32 հոդվածով և 1999թ. հունիսի 24-ին ընդունված »Ուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« ՈԴ դաշնային օրենքի 4 հոդվածով ամրագրված ակտիվ ընտրական իրավունքի ցենզերը չեն տարբերվում Հայաստանում սահմանված ապահնօներից¹⁰:

Նույն պահանջներն են սահմանված նաև Էստոնիայի Հանրապետությունում¹¹:

Իսկ Բուլղարիայի Հանրապետությունում՝ 1991թ. օգոստոսի 20-ին ընդունված »Ազգային ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհուրդների անդամների և քաղաքապետների ընտրությունների մասին« օրենքի 2 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ձայնի իրավունք չունեն անհրավագործունակ և ազատազրկումը կրող քաղաքացիները¹²:

⁸ Տես 1990թ. օգոստոսի 28-ին ընդունված «Չելիսիայի Ազգային խորհրդի ընտրությունների մասին» օրենքի հ.2-Նույն տեղում, էջ 368:

Տեսակի 3-ին տեղունակած «Սեյմի ընտրությունների մասին» Լեհաստանի օրենքի հ.6, կնտ 2-րդուն տեսում. Էջ 178:

¹⁰ Աշխատանքում օգտագործված ՈՒ ընտրական նոր օրենսդրությունից մեջընդունմերն տրված են հետևյալ ժղովածությունում՝ "Նայ ձի է՛ չաձի ի ա Թ մոռենու է Օահաձաօէ՛", ի ա ի ան ա ծան. Բ . Ի . Աէամ հա, - յ : "Ի և Ահա-ՅԵ", 2000թ. Էջ 134:

¹² **S̄hū ūnuñ inñnnij** t̄s 44:

Իրավագործունակությունից զրկվածության հանգամանքը որպես ընտրական իրավունքից զրկելու հիմք ամրագրված է նաև Զեխիայի Հանրապետությունում¹³:

Կան ընտրելու իրավունք ծեռք բերելու նաև ավելի խիստ սահմանափակումներ:

Դրանցից են քնակչության առողջության պաշտպանությանը վճարելը, հարկադիր բուժման վայրերում պահպելը, ժամկետային գինծառայության մեջ գտնվելը, հոգեկան հիվանդությունը, հասարակական իրավունքներից, ձայնի իրավունքից զրկված լինելը, կալանավորվելը, ազատազրկվելը՝ քննության տակ գտնվելու կամ հանցագործության մեջ մեղադրվելու դեպքում, դատարանի կողմից ոչ իրավագործ ճանաչվելը, դատարանի կողմից ընտրական իրավունքներից զրկված լինելը: Այսպիսով, ընտրական իրավունքից զրկված են իրավագործունակություն չունեցող կամ սահմանափակ իրավագործունակությամբ անձինք:

Առանձնահատուկ սահմանափակում կա Զեխիայում: Ընտրություններին մասնակցելու խոչընդոտ է օրենքով սահմանված անձնական ազատության սահմանափակումը՝ կապված քնակչության առողջության պաշտպանության հետ¹⁴:

Իսկ Մոլդովայի Հանրապետությունում, 1993 թ. հոկտեմբերի 14-ին ընդունված »Խորհրդարանի ընտրությունների մասին« օրենքի 4 հոդվածի 1-ին կետի ա, բ ենթակետերի համաձայն՝ ընտրություններին չեն կարող մասնակցել ժամկետային գինծառայության մեջ գտնվող և հոգեկան հիվանդ քաղաքացիները¹⁵:

Հետաքրքիր է նշել, որ Լեհաստանի Հանրապետությունում քվեարկության չեն մասնակցում դատական իշխանության կողմից հասարակական իրավունքներից, պետական տրիբունալի կողմից ձայնի իրավունքից զրկված, մտավոր անլիարժեքության պատճառով օրենսդրական կարգով ձայնի իրավունքից բացարձակապես կամ ամբողջությամբ զրկված անձինք¹⁶:

Իսկ Լատվիայի Հանրապետությունում, 1992 թ. հոկտեմբերի 20-ին ընդունված »5-րդ Սեյմի ընտրությունների մասին« օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ձայնի իրավունքից զրկված են ծերբակալված, քննության տակ գտնվող կամ հանցագործության մեջ մեղադրվող անձինք, որոնց համար մեկուսացման միջոց ընտրված է բանտարկությունը:

Լիտվայում, 1992թ. հուլիսի 9-ին ընդունված »Սեյմի ընտրությունների մասին« օրենքի 2 հոդվածի համաձայն՝ դատարանի կողմից անիրավագործունակ ճանաչված քաղաքացիները չեն կարող մասնակցել ընտրություններին¹⁷:

Յուրահատուկ ընտրական ցենզ է սահմանված Հունգարիայում: 1994թ. դեկտեմբերի խմբագրությամբ ընդունված »Խորհրդարանի անդամների ընտրությունների մասին« N XXXIV 89 օրենքի 2 հոդվածի ա, բ, մ կետերի համաձայն՝ ձայնի իրավունքից զրկվում է ցանկացած անձ, որը գտնվում է խնամակալության տակ, որը սահմանափակում կամ բացառում է նրա

¹³ Տես 1990թ. օգոստոսի 28-ին ընդունված «Զեխիայի Ազգային խորհրդի ընտրությունների մասին» օրենքի h.2-ի կետ 2-Նույն տեղում, էջ 368:

¹⁴ Տես «Զեխիայի Ազգային խորհրդի ընտրությունների մասին» օրենքի h.2-ի, կետ 3-Նույն տեղում, էջ 368:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 160:

¹⁶ Տես «Սեյմի ընտրությունների մասին» Լեհաստանի օրենքի h.7-Նույն տեղում, էջ 178:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 108, 118:

գործունակությունը, դատարանի վերջնական որոշմամբ հեռացված է հանրային գործերի մասնակցությունից, քրեական կարգով հարկադիր բուժման է դատապարտված:

Իսկ Ղազախստանում, 1995թ. ընդունված »Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին« Ղազախստանի Հանրապետության օրենքի 4 հոդվածի համաձայն՝ ընտրություններին չեն մասնակցում դատարանի կողմից ընտրական իրավունքներից գրկված քաղաքացիները¹⁸:

Այսպիսով, ընտրողը (քաղաքացին), բավարարելով որոշակի պահանջներ, ձեռք է բերում ակտիվ ընտրական իրավունք, որն իրականացնում է ընտրությունների գործընթացի II-րդ փուլում՝ քվեարկության միջոցով: Այդ պատճառով քվեարկությունը խիստ կարևորվում է, և քվեարկությանը մասնակցելու մեխանիզմները բոլոր երկրների խորհրդարանական ընտրություններին վերաբերող օրենքներում մանրամասն կարգավորված են տարբեր ընտրական խմբերի, այդ թվում՝ պետության տարածքում և պետության տարածքից դուրս բնակվող, արտասահմանում գտնվող, դժվարամատչելի վայրերում ապրող խմբերի, զինծառայողների, հաշմանդամների, քվեարկությանը մասնակցելու դժվարություն ունեցողների, հիվանդանոցներում, համգսույան տներում գտնվողների, ազգային փոքրամասնությունների և այլոց համար:

«Հնական օրենսգրքի 2 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ »Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրական իրավունք: «Հնական օրենսգրքի 9 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովելու հանար Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների դեկավարները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, կազմում են ընտրական ցուցակներ, որոնցում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընդգրկվում են Հայաստանի ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, ովքեր բնակվում կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: Ընդ որում, »Ընտրողի բնակվելու կամ գտնվելու վայր համարվող պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում, քաղաքացին, ընտրական ցուցակներում ընդգրկվելու հայտով, կարող է դիմել սահմանակից կամ իր բնակվելու կամ գտնվելու վայրին ավելի մոտ գտնվող պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապահովվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը, բայց այդ իրավասության իրականացման մեխանիզմի սահմանումը վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ինչը պրակտիկայում մի շարք բարդություններ է առաջացնում ընտրական իրավունքի իրացման, դրա վարչական և դատական կարգով պաշտպանության գործում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգն

¹⁸ Տես նույն տեղում, էջ 62, 88:

արդյունավետ չէ և չի կարող արտերկրի մեր քաղաքացիների իրավունքների իրականացման բավարար հիմք համարվել:

Համեմատության ենթարկած բոլոր պետությունների քաղաքացիները, որոնք գտնվում են արտասահմանում, ունեն ընտրական ակտիվ իրավունք, այդ թվում՝ Ռուբախնայում, Խորվաթիայում, Ալբանիայում, ՌԴ-ում, Ռումինիայում, Բուլղարիայում, Եստոնիայում: Այս երկրներում գործում են նաև ընտրական իրավունքի իրականացման օրենքով մանրամասնված համարժեք, համանանան մեխանիզմներ:

Ստորև ներկայացնենք նշված հարցում Հայաստանի Հանրապետության իրավակարգավորվածության պրակտիկայից տարբերվող այլ երկրների որոշ առանձնահատկություններ:

Այսպես՝ Խորվաթիայում, ըստ »Խորվաթիայի Հանրապետության Խորհրդարանի« (Սաբորի) ներկայացուցիչների ընտրությունների մասին« օրենքի 5 հոդվածի՝ քաղաքացիները, որոնք ընտրությունների օրը գտնվում են արտասահմանում, բայց բնակվում են Խորվաթիայում, քեարկում են դիվանագիտական բաժիններում ըստ Խորվաթիայում իրենց բնակության վայրի: Ընտրողները, որոնք Խորվաթիայում չեն ապրում, քեարկում են պետական ցուցակների հիման վրա՝ օրենքով սահմանված հատուկ կարգով:

Ալբանիայում 1992թ. փետրվարի 4-ին ընդունված »Ալբանիայի Հանրապետության ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին« օրենքի 23 հոդվածի համաձայն՝ քաղաքացիները, որոնք մշտապես բնակվում են Ալբանիայից դուրս, բայց մինչև ընտրությունների օրը գտնվում են Ալբանիայում, գրանցվում են ընտրական ցուցակներում՝ ըստ իրենց նախկին բնակության վայրի: Այս անձանց քեարկության մասնակցելու իրավունքի մասին նշում է կատարվում միջազգային անձնագրում¹⁹:

Հատուկ առանձնացնենք Բուլղարիայի Հանրապետությունում գործող օրենսդրական դրույթը: Ըստ 1991թ. օգոստոսի 20-ին ընդունված »Ազգային ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհուրդների անդամների և քաղաքապետների ընտրությունների մասին« օրենքի 11 հոդվածի՝ արտասահմանում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող և մինչև ընտրություններն այնտեղ մնալու մտադրություն ունեցող քաղաքացիներն, ընտրական ցուցակներ մտցվում են, եթե անձանք ընտրություններին մասնակցելու ցանկություն են հայտնել: Ի հավաստումն այն բանի, որ ընտրողը քեարկել է, վերջինիս միջազգային անձնագրում հատուկ նշում է կատարվում²⁰:

ՈՂ-ում ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ՈՂ տարածքից դուրս գտնվող կամ բնակվող ՈՂ քաղաքացիները Պետական դումայի պատգամավորների ընտրություններին ունեն ՈՂ այլ քաղաքացիների հետ հավասար իրավունքներ²¹:

¹⁹ Տես նոյն տեղում, էջ 340, 16:

²⁰ Տես նոյն տեղում, էջ 45:

²¹ Տես 1999թ. հունիսի 24-ին ընդունված «ՈՂ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈՂ դաշնային օրենքի h.4-ի կետ 5-«Նաև ծի է չափական թվում անձնագրում հատուկ նշում է կատարվում»:

Լատվիայում, հաշվի առնելով մեծաթիվ սփյուռքի առկայությունը, խորհրդարանական ընտրությունների մասին օրենքի մեկ ամբողջ գլուխ է հատկացված արտերկրում գտնվողների ընտրական իրավունքը, որա իրականացման կարգը հանգամանորեն սահմանելու համար²²:

Բուլղարիայում, արտասահմանում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող և մինչև ընտրությունները այնտեղ մնալու մտադրություն ունեցող քաղաքացիները մտցվում են ընտրական ցուցակներ, եթե անձանք ընտրություններին մասնակցելու ցանկություն են հայտնել: Քվեարկության փաստն ամրագրվում է ընտրողի միջազգային անձնագրում նշում կատարելով²³:

Էստոնիայում, երկրից դուրս գտնվողների համար, Հայաստանի նման, սահմանվում է հաշվառման կարգ: Սակայն, եթե Հայաստանում ընտրողներն ընտրական ցուցակներում ընդգրկվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, ապա Էստոնիայում ընտրողները ներառվում են ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների պետական ռեգիստրում՝ Էստոնիայի կառավարության սահմանած կարգով: 1996 թվականին ընդունված »Պետական ժողովի ընտրությունների մասին« օրենքի 21 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ »Արտասահմանում մշտապես բնակվող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն, ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների պետական ռեգիստրում ընդգրկվում են Էստոնիայի արտասահմանյան ներկայացուցչությունների միջոցով՝ Էստոնիայի կառավարության սահմանած կարգով«: Էստոնիայում առանձնացված է նաև այլ ընտրական խումբ՝ Էստոնիայի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները, որոնք մշտապես բնակվում են Էստոնիայի տարածքում, բայց այդ տարածքը Էստոնիայի իրավասության տակ չէ: Այս կատեգորիայի ընտրողները նույնապես մտցվում են Էստոնիայում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների պետական ռեգիստր: Այս անգամ ևս ռեգիստրում ընդգրկելու կարգը սահմանում է Էստոնիայի կառավարությունը²⁴:

Հաջորդ ընտրական խումբը, որոնց համար սահմանված է քվեարկությանը մասնակցելու առանձնացված կարգ, գինծառայողութեան են:

ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ զորամասերի տեղակայման տարածքում բնակվող գինծառայողները և նրանց ընտանիքների՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, բացառությամբ նոտակա բնակավայրից առնվազն 50 կիլոմետր հեռու տեղակայված գինվորական մասերի գինծառայողների, ընդգրկվում են համապատասխան ընտրական տեղամասի (որի տարածքում տեղակայված է զորամասը) ընտրական ցուցակներում՝ զորամասի դեկավարության՝ ընդհանուր հիմունքներով ներկայացված տվյալների հիման վրա:

²² Տես 1992թ. հոկտեմբերի 20-ին ընդունված «5-րդ ՍԵԿՄԻ բնադրությունների մասին» Լատվիայի օրենքի գլուխ 6, 59-67 հ.հ.-"Նաî Ծí էê էçáèðåðåëüí ն օ չàêî í î հ նððàí Ӧåí ððåëüí î է է Աî նðî ծí է է Աâðî ի ն", էջ 115-116:

²³ Տես 1991թ. օգոստոսի 20-ին ընդունված «Ազգային ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհուրդների անդամների և քաղաքապետների ընտրությունների մասին» օրենքի հ.11-Նույն տեղում, էջ 45:

²⁴ Սանրան տես 1996 թ. ընդունված «Պետական ժողովի ընտրությունների մասին» Հստոնիայի օրենքի 21 հոդվածի կետ 3-Նույն տեղում, էջ 386:

ՈՂ-ում, զինմասում գտնվող զինծառայողների, զինմասի տեղակայման տարածքում բնակվող նրանց ընտանիքների անդամների և այլ ընտրողների ընտրական ցուցակը կազմում է տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ զինմասի հրամանատարի ներկայացրած տվյալների հիման վրա²⁵:

Ղազախստանում, պահակակետերում գտնվող զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների և այլ ընտրողների ընտրական ցուցակները կազմվում են զինծիավորի հրամանատարի ներկայացրած տվյալների հիման վրա²⁶:

Փաստորեն, ՈՂ-ում և Ղազախստանում, ի տարբերություն Հայաստանի, կազմվում են առանձին ընտրական ցուցակներ, որոնցում, բացի զինծառայողներից և նրանց ընտանիքների անդամներից, ներառվում են նաև զինմասի տեղակայման տարածքում բնակվող այլ ընտրողներ:

Մինչդեռ, << ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ առանձին ընտրական ցուցակներ կազմվում են միայն այն դեպքում, եթե զիննար մոտակա բնակավայրերից առնվազն 50 կմ հեռու է տեղակայված։ Այդ զինվորական մասերի ընտրական ցուցակները կազմում են զինվորական մասերի դեկավարները և քվեարկությունից ոչ ուշ, քան 20 օր առաջ հանձնում են մարզային ընտրական հանձնաժողովին։

Հայաստանում, ինչպես նաև ՌԴ-ում, Ղազախստանում և այլ երկրներում, գորամասի տարածքից դուրս բնակվող և ընտրական իրավունք ունեցող գինծառայողներն ընտրողների գույքակմերում ընդունվում են ընդհանուր հիմունքներով:

Նույն կարգն է սահմանված նաև Ալբանիայում, որտեղ 1992թ. փետրվարի 4-ին ընդունված »Ալբանիայի Հանրապետության ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին« օրենքի 22 հոդվածի համաձայն՝ »Ալբանիայի Հանրապետությունում զինծառայություն անցնող կամ զինմասում ապրող ընտրողների ընտրական ցուցակները կազմվում և հրապարակվում են բազմակարծության ժամանակավոր գործկոմների կողմից՝ զինմասերի և զինվորական ստորաբաժանումների հրամանատարության աջակցությամբ։ Մյուս զինծառայողներն ընտրական ցուցակներում ժամանակավոր գործկոմների կողմից գրանցվում են ըստ բնակության վայրի²⁷։

Մեր կարծիքով, առանձնահատուկ պետք է անդրադառնալ այն կարևոր հանգամանքին, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 9 հոդվածի 5-րդ կետի համաձայն նախատեսված դեպքերում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընտրական ցուցակները կազմում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների, կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունների և գիմնաստի դեկանարները:

²⁵ Տես 1999թ. հունիսի 24-ին ընդունված «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դրումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օրենքի հ.15-ի կետ 4-՝ “Նա՛ ձի է եւ շահ է ի ա Եօ”, Էջ 137:

²⁷ Մանուկյան Գրես նույն Գեղորում, էջ 16:

Փաստորեն, բոլոր այն դեպքերում, երբ ընտրական ցուցակները կազմում է ոչ թե ՀՀ ընտրական օրենսգրքի 9 հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմնական սուբյեկտը՝ համայնքի ղեկավարը, այլ տվյալ ընտրական խումբը ներկայացնող սուբյեկտը, ընտրական ցուցակ կազմելու կարգը օրենսգրքով չի սահմանված: Այն սահմանելու իրավունքը վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Սա այն դեպքերից մեկն է, երբ կենտրոնական ընտրական հանձնաժողովն օժնված է, ոչ այնքան մասնավոր-իրավական բնույթի, այլ օրենքի մակարդակի նորմաստեղծ լիազորությամբ: Ընդ որում, այդ լիազորությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովն օժնվում է ոչ թե առանձին օրենքով, որտեղ սահմանված կյանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ողջ գործունեության կարգավորման սկզբունքները, այլ ՀՀ ընտրական օրենսգրքով, ինչը Հայաստանի՝ ընտրական հարաբերությունների կարգավորման այսօրվա պայմաններում չի կարելի արդյունավետ համարել:

Հետաքրքիր է նաև նշել, որ »Ազգային խորհրդի ընտրությունների մասին« ԶԵԽԻԱՋ Ազգային խորհրդի օրենքի 8-9 հոդվածների համաձայն՝ ԶԵԽԻԱՋ Հանրապետությունում ընտրական ցուցակներն, ինչպես ընդհանրապես, այնպես էլ գինծառայողների համար, կազմում է տեղական ազգային կոմիտեն: Եթե խոսք գնում է ԶԵԽԻԱՋ Հանրապետությունում գինված ուժերի, ազգային անվտանգության բանակի ծառայողների մասին, որոնք ապրում են գորանոցներում, ապա ընտրական ցուցակները տեղական ազգային կոմիտեն կազմում է գինվորական կազմավորման ղեկավարների հետ համատեղ՝ ըստ այն գորանոցի գտնվելու վայրի բնակելի կետի, որտեղ վերոնշյալ ընտրողները հաշվառված են²⁸:

Վերադարձալով գինծառայողների ընտրական խմբի իրավական կարգավիճակին՝ նշենք, որ, օրինակ, Մոլորվայի Հանրապետությունում նրանք ընդհանրապես զրկված են ընտրություններին մասնակցելու իրավունքից: Այսպես՝ Մոլորվայի Հանրապետությունում »Ժամկետային գինծառայության մեջ գտնվող քաղաքացիները չեն կարող մասնակցել ընտրություններին«²⁹:

Լիտվայի Հանրապետությունում, 1992թ. հուլիսի 9-ին ընդունված »ՍԵՅՄ ընտրությունների մասին« օրենքի 23 հոդվածի համաձայն՝ գինծառայության կամ այլընտրանքային ծառայության մեջ գտնվող անձինք ընդգրկվում են այն ընտրական տեղամասի ընտրական ցուցակներում, որտեղ մշտապես բնակվել են մինչ գորակոչը:

Հատուկ նշենք նաև, որ Լիտվայի Հանրապետությունում առանձնացված է նաև ընտրական խումբ՝ կապված ոչ գինվորական ծառայության հետ: Վերոնշյալ օրենքի նույն հոդվածի համաձայն՝ ազգային պաշտպանության և ներքին գործերի համակարգի ծառայողները, ծառայության պիտանի ձանաչված և կրկին ծառայության անցած սպաները մտցվում են այն ընտրատարածքների ընտրական ցուցակներում, որտեղ իրենք մշտապես բնակվում են³⁰:

²⁸ Տես նույն տեղում, էջ 369:

²⁹ Մանրամասն տես 1993թ. հոկտեմբերի 14-ին ընդունված «Խորհրդարանի ընտրությունների մասին» Մոլորվայի օրենքի հ.4-ի 1կետի և նախակետ-Նույն տեղում, էջ 160:

³⁰ Տես նույն տեղում, էջ 121:

Բուլղարիայի Հանրապետությունում, գեներալների (ծովակալների), սպաների, ենթասպանների, ժամանակավորապես զինծառայության մեջ գտնվող անձանց և բանակային ծառայողների անուններն ընտրական ցուցակներում ընդգրկվում են ըստ իրենց բնակության վայրի և ընտրությունների օրվանից առաջ գրանցված հասցեի: Ժամկետային զինծառայության մեջ գտնվող անձանց անունները ժամանակավոր գործկոմի կողմից ընտրական ցուցակներում ընդգրկվում են զինմասի գտնվելու վայրին նույն ընտրական կետում: Ժամկետային զինծառայության մեջ գտնվող անձանց ընտրական ցուցակները յուրաքանչյուր զինմասում պատրաստվում է տվյալ զինմասի հրամանատարի հսկողությամբ³¹:

Յուրահատուկ են հաշմանդամների, քվեարկությանը մասնակցելու դժվարություն ունեցողների, սանատորիաներում, հիվանդանոցներում, ստացիոնար բուժիմնարկներում գտնվողների՝ որպես առանձնահատուկ ընտրական խմբերի կարգավիճակի հիմնահարցերը:

« Ընտրական օրենսգրքում վերոնշյալ ընտրական խմբերի կարգավիճակն առանձնացված չէ, այսինքն՝ նրանք քվեարկությանը մասնակցում են ընդհանուր կարգով, ինչը լուրջ խոչընդոտ է այդ խմբերի ընտրական իրավունքների իրականացման համար: »

Իսկ, օրինակ, Ուսասատանի Դաշնությունում, 1999թ. հունիսի 24-ին ընդունված »ՈԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« ՈԴ դաշնային օրենքի 15 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ըստ ընտրողների ժամանակավոր գտնվելու վայրի (հիվանդանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում և ժամանակավոր գտնվելու այլ վայրերում) ծևավորվող ընտրական տեղամասի ընտրողների ցուցակը, ինչպես և մյուս դեպքերում, կազմվում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից, որին, տվյալ դեպքում, ընտրողների մասին տվյալները ներկայացնում են վերոնշյալ հաստատությունների դեկավարները³²:

Ուկրաինայում, 1994թ. դեկտեմբերի 22-ի խմբագրությամբ »Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին« օրենքի 20 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հիվանդանոցներում, այլ առողջարանական բուժիմնարկներում ծևավորվում են ընտրական տեղամասեր և ըստ այդ տեղամասերի կազմվում ընտրական ցուցակներ՝ տվյալ հաստատության դեկավարների ներկայացրած տվյալների հիման վրա³³:

Լեհաստանի Հանրապետությունում, հիվանդանոցներում, սոցիալական ապահովության հիմնարկներում (հավանաբար խոսքը ծերանոցների մասին է) գտնվող այն անձանց համար, որոնք ներառյալ ընտրությունների օրը գտնվելու են այդ տեղերում, ընտրական ցուցակներ կազմվում են GMINA-ի համապատասխան հաստատությունների կողմից: Վյո անձանց ցուցակները GMINA ներկայացնում են հաստատությունների դեկավարները³⁴:

Բուլղարիայի Հանրապետությունում, 1991թ. օգոստոսի 20-ին ընդունված »Ազգային ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհուրդների անդամների և քաղաքապետների անդամների ընտրությունների մասին« Բուլղարիայի օրենքի հ.10-Նոյն տեղում, էջ 45:

³¹ Տես "Նâî ծí èê çâêî î î   ", էջ 137:

³² Տես "Նâî ծí èê èçâè ðàðâëü î ðâëî î î   ", էջ 315:

ծննդատներում, հիվանդանոցներում գտնվող քաղաքացիները քվեարկում են այդ հիմնարկի դեկավարի կազմած ընտրական ցուցակով:

Ղազախստանի Հանրապետությունում, 1995թ. ընդունված «Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» օրենքի 26 հոդվածի համաձայն՝ առողջարաններում, առողջարանական հիմնարկներում, հանգստյան տներում, հիվանդանոցներում ծևավորվում են ընտրական տեղամասեր, և տվյալ հիմնարկի դեկավարի ներկայացրած տվյալների հիման վրա կազմվում են ընտրական ցուցակներ: Ի տարբերություն Հայաստանի, առանձին ընտրական խմբերի համար ընտրական ցուցակներ կազմելու կարգը Ղազախստանի Հանրապետությունում չի սահմանում կենտրոնական ընտրական հանձնաժողովը, այլ օրենքում սահմանված է, որ »ընտրողների ցուցակները կազմվում են ընտրությունների կազմակերպման համար հարմար ձևով«³⁵:

Ղազախստանի Հանրապետությունում հատուկ կարգ է սահմանված նաև քվեարկությանը մասնակցելու դժվարություն ունեցողների համար: Այսպես՝ վերոնշյալ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ ընտրողները չեն կարողանում գալ շրջանային ընտրական տեղամաս՝ առողջական վիճակի և այլ պատճառներով, շրջանային ընտրական հանձնաժողովը նրանց պահանջով քվեարկություն է կազմակերպում այդպիսի ընտրողների գտնվելու տեղերում: Այն դեպքում, երբ ընտրողը ոչ ուշ, քան ընտրություններից 3 օր առաջ գիտի, որ չի կարող գալ ընտրական տեղամաս, իրավունք ունի իր քվեաթերթիկը նախապես փոխանցել շրջանային ընտրական հանձնաժողով: Քվեաթերթիկն ստանալիս ընտրողն ստորագրում է ընտրական ցուցակում: Քվեաթերթիկը լրացնելուց հետո ընտրողը այն տեղադրում է ծրարում, որը սոսնձվում, կնքվում և ստորագրվում է ընտրական հանձնաժողովի անդամի կողմից, և ապա փոխանցվում շրջանային ընտրական հանձնաժողովին, որտեղ էլ կնքված ծրարը պետք է պահպի մինչև ընտրությունների օրը:

Ուժմինիայում, ըստ 1992թ. հունվարի 15-ին ընդունված »Ներկայացուցիչների պալատի և Սենատի ընտրությունների մասին« N 68/1992 օրենքի 59 հոդվածի՝ անկողնուն գամված ընտրողների մոտ, իրենց խնդրանքով և ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, ուղարկվում է քվեարկության կազմակերպմանը մասնակցող աշխատանքային խումբ, որն իր հետ տանում է նշված ընտրողների քվեարկելու իրավունքի իրականացման ապահովման համար անհրաժեշտ բոլոր ընտրական նյութերը³⁶:

Առաջ անցնելով նշենք, որ Հայաստանում քվեարկությանը մասնակցելու առանձին կարգ է սահմանված ծերբակալված և կալանքի տակ գտնվող քաղաքացիների համար, ընդ որում՝ ծերբակալված քաղաքացիների իրավունքների ազատ իրականացման ավելի լայն հնարավորություններ են նախատեսված, քան կալանքի տակ գտնվողների համար:

Այսպես, << ընտրական օրենսգրքի 52 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծերբակալված քաղաքացիները քվեարկությանը մասնակցում են իրենց հաշվառման վայրուն կազմակերպված տեղամասում՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

³⁴ Տես «Մեյմի ընտրությունների մասին» Լեհաստանի օրենքի h.14-ի կետ 1-Նոյն տեղում, էջ 179:

³⁵ Մանրամասն տես նոյն տեղում, էջ 45, 93:

Մինչդեռ, կալանքի տակ գտնվող ընտրողներն իրենց քվեարկելու իրավունքն իրականացնում են առանձին ցուցակներով, առանձին ընտրական տեղամասերում՝ կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունների դեկավարների նախապատրաստած, կազմակերպած և նրանց իսկ կողմից անցկացվող ընտրական գործընթացում։ Ըստ << ընտրական օրենսգրքի 9 հոդվածի 5-րդ կետի՝ << ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերում կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընտրողների ցուցակները կազմում են ...կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունների դեկավարները։ Վերոնշյալ հաստատությունների դեկավարները, << ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակները կազմում են մարզային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ, քվեարկությունից 3 օր առաջ։

Ըստ << ընտրական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ կետի՝ կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում ընտրական տեղամասեր են կազմվում կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով։ Այդ հաստատություններում, ընտրությունները ընտրական օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում են այդ հաստատությունների դեկավարները։

Լեհաստանում, օրինակ, տարբերակված չէ ընտրողը ձերբակալված է, թե կալանավորված, բայց քվեարկությանը մասնակցելու առանձնացված կարգ է սահմանված ուղղիչ հաստատություններում, բանտերում գտնվողների համար։ Այսպես՝ 1991թ. հուլիսի 3-ին ընդունված »Սեյմի ընտրությունների մասին« օրենքի 14 հոդվածի համաձայն՝ ընտրությունների օրը ներառյալ ուղղիչ հաստատություններում, բանտերում գտնվող անձանց ընտրական ցուցակները կազմում են GMINA-ի հանապատասխան ստորաբաժանումները։ Վերջիններին, ուղղիչ հաստատություններում, բանտերում գտնվող վերոնշյալ անձանց ցուցակները տրամադրվում են այդ հաստատությունների տնօրինությունների կողմից՝ ոչ ուշ, քան ընտրություններն անցկացնելու օրվանից 14 օր առաջ³⁷։

Յուրահատուկ կարգ է սահմանված Լատվիայի Հանրապետությունում, որտեղ ձերբակալվածների ընտրական խմբի մասին »5-րդ Սեյմի ընտրությունների մասին« օրենքում նշում չկա, բայց նույն օրենքի 3 հոդվածի 2-րդ կետում ամրագրված է՝ »ձայնի իրավունքից գրկված են ...2) կալանքի տակ գտնվող, քննության տակ գտնվող կամ հանցագործության մեջ մեղադրվող անձինք, որոնց համար մեկուսացման միջոց ընտրված է ազատազրկումը։ Այդ անձինք կորցնում են ձայնի իրավունքը, բայց նրանք կարող են ընտրվել։« Վերջին դրույթը բացարիկ դեաք է վերոնշյալ անձինք կորցնում են ակտիվ ընտրական իրավունքը, իսկ պահիվ ընտրական իրավունքը, որի ձեռքբերման համար օրենսդրությամբ, որպես կանոն, ավելի խստ պահանջներ են սահմանվում՝ ոչ³⁸։

Հետաքրքիր է նշել, որ համեմատական վերլուծության ենթարկված երիտասարդ ժողովրդավարության եվրոպական երկրներում առանձնացված են նաև այլ ընտրական

³⁶ Տես մանրամասն նույն տեղում, Էջ 96-97, 214։

³⁷ Տես նույն տեղում, Էջ 179։

իսմբեր և սահմանված է նրանց ակտիվ ընտրական իրավունքի իրականացման առանձնահատուկ կարգ, որոնք Հայաստանում՝ Ելնելով բնակչության ազգային-էթնիկական կառուցվածքից, իրավակարգավորման պրակտիկայից, ընտրական գործընթացում առանձնացված չեն դիտարկվում:

Ընտրական այդպիսի խմբերից, թերևս, անդրադառնանք միայն էթնիկական փոքրամասնությունների խմբին, որոնց ընտրական իրավունքների հիմնախնդիրները մշտական բանավեճի առարկա են: Դրանք բազմակողմանի ուսումնասիրնան են ենթարկվել եվրոպական, ամերիկյան մի շարք գիտնականների կողմից:

Ընդհանրապես առանձնացվում են էթնիկ խմբերի ընտրական իրավունքների իրականացնան երաշխիքներ, որոնք տարբեր երկրներում կիրառվում են տարբեր համադրություններով կամ առանձին։ Այդ երաշխիքները ներառում են ինչպես առանձին ընթացակարգերի սահմանում, այնպես էլ բացառությունների ամրագրում։ Դրանցից են. 1. առանձին ընտրատարածքների կազմումը, 2. առանձին ցուցակների կազմումը, 3. կուսակցությունների համար համամասնական ընթացակարգով ամրագրված անցողիկ սահմանի (որպես կանոն՝ 5%-ի) նվազեցումը կամ բացառումը և այլն։ Ամերիկյան գիտնական Արնեդ Լիֆարթը, նշելով էթնիկ խմբերի ներկայացուցչության ապահովման հատուկ կարգի որոշ առավելություններ, միաժամանակ իր »Ընտրական իրավունքները և դրանց քաղաքական հետևանքները« աշխատությունում իրավացիորեն շեշտում է, որ էթնիկ խմբերի համար ընտրական առանձնահատուկ ընթացակարգերի սահմանումը՝ 1. այդ խմբերի հաշվառման հետ կապված տեխնիկական բարդություններ է առաջացնում, 2. նրանց միջև թշնամանքի պոտենցիալ վտանգ է պարունակում³⁹:

Հետաքրքիր է, որ մեր կողմից ուսումնասիրված երկրներից, օրինակ, Սլովենիայում, սահմանված է Ա. Լիֆարթի առաջարկած տարբերակը: Այն է՝ ազգային փոքրամասնությունների համար գործում է համամասնական ներկայացուցչության ընդհանուր սկզբունքը: Այսպես՝ Սլովենիայի 1992թ. մարտի 10-ին ընդունված »Պետական պալատի ընտրությունների մասին« օրենքի 2 հոդվածի համաձայն՝ իտալական և հունգարական ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնք ունեն ձայնի իրավունք, իրավունք ունեն ընտրել և ընտրվել պատգամավոր իտալական և հունգարական ազգային փոքրամասնությունների կողմից: Պատգամավորները ընտրվում են հետևյալ սկզբունքով՝ մեկ պատգամավոր մոտավորապես հավասար թվով ընտրողներից: Ներկայացուցչության այս ընդհանուր սկզբունքին են ենթարկվում նաև ազգային փոքրամասնությունները: Նոյն օրենքի 2 հոդվածի համաձայն՝ իտալական և հունգարական ազգային փոքրամասնություններն իրավունք ունեն ընտրել յուրաքանչյուրը Պետական պալատի մեջական պատգամավոր⁴⁰:

Իսկ Խորվաթիայում սահմանված է առանձին ընտրատարածքների ստեղծման տարրերակը: Այսպես՝ Խորվաթիայի Հանրապետությունում էթնիկ փոքրամասնությունները և

³⁸ Մանրամասն տես նույն տեղում, էջ 108:

³⁹ Ազգային փորձամասնությունների ընտրական իրավունքների մասին մանրամասն տես հետևյալ գրքում. Grofman B., Lijphart A. "Electoral Laws and Their Political Consequences", "Agathon Press", New York, 1994, p. 113-121:

⁴⁰ Stuu "Náí dí èê èçáè ðàðåëüí û õ çàéî í î â ñòðàí Öáí ððåëüí î é è Âí ñòí ÷í î é Ååðí i û", tq 296:

հանրույթները, որոնք 1981 թվականի հաշվարկով կազմում են Խորվաթիայի Հանրապետության ողջ բնակչության 8 տոկոսից ավելին, »Խորվաթիայի Հանրապետության Խորհրդարանի ներկայացուցիչների ընտրությունների մասին« օրենքի 10 հոդվածի համաձայն՝ պետք է ներկայացված լինեն խորհրդարանում: Ընդ որում, նույն օրենքի 23 հոդվածում սահմանված է ներկայացուցիչների ընտրության կարգը: Խորվաթիայի Հանրապետությունում այնքան է կարևորված խորհրդարանում փոքրամասնությունների ներկայացուցչության ապահովման խնդիրը, որ խորհրդարանում փոքրամասնություններին հատկացված տեղերը լրացնելու համար անգամ նորընտիր խորհրդարանի պալատների աշխատանքի առաջին նստաշրջանի սկսվելուց հետո 60 օրվա ընթացքում նախատեսվում է պարտադիր կերպով գուգահեռ ընտրությունների անցկացում՝ փոքրամասնությունների համար ստեղծվող հատուկ ընտրատարածքներում⁴¹:

Ընտրական գործընթացի կարևոր փուլերից է ընտրողների գրանցումը: Այն ընտրողի կողմից իր ձայնի իրավունքի իրականացման անհրաժեշտ նախապայման է, և նշանակում է ընտրողների ցուցակում անձի ներառում, որի հիման վրա էլ այդ անձը կարող է մասնակցել քվեարկությանը:

Ինչպես ընտրական իրավունքի արևմտյան մասնագետ Ռ. Զ. Կարլսոնն է նշում իր »Ընտրողների գրանցման համակարգերը Կանադայում և Արևմտյան Եվրոպայում« գրքում⁴²: »Ընտրողների գրանցման նպատակն այն է, որ ձայնի իրավունք ունեցող ընտրողի անձն այնպես նույնականացվի, որ միայն ինքը կարողանա քվեարերիկը գտել քվեատուիի մեջ«:

Հյաստանում, ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի՝ ընտրողների ցուցակներում պարտադիր կարգով ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող, տվյալ համայնքում հաշվառված բոլոր քաղաքացիները, ինչպես նաև տվյալ համայնքում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող և հաշվառում չունեցող այն քաղաքացիները, ովքեր քվեարկության օրվանից ոչ ուշ քան 5 օր առաջ, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, համայնքի ղեկավարին են ներկայացնում ընտրողների ցուցակում իրենց անունը, ազգանունը ընդգրկելու վերաբերյալ հայտ:

Իսկ ՌԴ-ում տվյալ ընտրական տեղամասում ընտրական ցուցակներում ընդգրկվելու (գրանցվելու) իրավունք ունեն ոչ միայն մշտապես, այլ նաև առավելապես այդ տեղամասում բնակվող ընտրողները⁴³:

Լեհաստանում մշտական բնակության վայր չունեցող ընտրողը քվեարկողների ցուցակում ընդգրկվում է ըստ ընտրությունների պահին բնակության վայրի՝ GMINA-ին (պետական

⁴¹ Տես «Խորվաթիայի Հանրապետության Խորհրդարանի (Սաբորի) ներկայացուցիչների ընտրությունների մասին» օրենքի h.26-Նույն տեղում, էջ 343:

⁴² Carlson R. J."Voter Registration Systems in Canada and Western Europe", New York, 1974, p.1.

⁴³ Տես մանրամասն «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դրումայի պատզամավորների ընտրությունների մասին» օրենքի h.16-ի կետ 2 և «ՈԴ քաղաքացիների հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական նրաշխիքների մասին» ՈԴ դաշնային օրենքի h.17-ի կետ 2-Նաâ ծր է չափ ի ա ԹՕ", էջ 137, 48:

իանձնարարությամբ ցուցակ կազմող մարմին) ընտրություններից ոչ ուշ, քան 7 օր առաջ ներկայացրած իր պահանջի հիման վրա⁴⁴:

Երկրների մեծ մասում, որոնց խորհրդարանական ընտրությունների մասին օրենքները ենթարկվել են համեմատության, գործում են լրացուցիչ ընտրական ցուցակներ: Հայստանում նախկին ընտրական օրենսդրությամբ նախատեսված էր լրացուցիչ ընտրական ցուցակներ կազմելու հնարավորություն, բայց 1999թ. ընդունված նոր ընտրական օրենսդրով չի նախատեսում լրացուցիչ ընտրական ցուցակների գոյություն՝ բացառելով հնարավոր չարաշակումները:

Հետաքրքիր է, որ Ալբանիայում, Մոլդովայում, Եթե ընտրողը փոխում է իր բնակության վայրը ընտրողների ցուցակները հրապարակելուց հետո մինչ ընտրությունների օրը, նրա գրավոր պահանջով իրավասու մարմինը տալիս է վկայական նոր բնակության վայրում քվեարկելու համար, և ընտրական ցուցակում նշում է արվում: Տրված վկայականի հիման վրա ընտրողը գրանցվում է լրացուցիչ ընտրական ցուցակում ըստ նոր բնակության վայրի⁴⁵:

Լեհաստանում, ոչ թե կազմվում են քվեարկողների լրացուցիչ ցուցակներ, այլ ընտրությունների օրը մարզային ընտրական հանձնաժողովն ավելացնում է արդեն կազմված քվեարկողների ցուցակում՝

1. ձայնի հրավունքի վկայական ներկայացնող անձանց,
 2. քվեարկողների ցուցակում ընդգրկված անձանց, եթե վերջիններս կարող են ապացուցել, որ տվյալ ընտրատարածքում գրանցված մշտական բնակիչներ են, և եթե քվեարկողների ցուցակ կազմող մարմինը (GMINA) հաստատում է, որ այդ անձը գրկված չէ ձայնի հրավունքից⁴⁶.

Լիտվայի Հանրապետությունում օրենքով սահմանված է միայն ընտրողների ցուցակների կազմումն սկսելուց հետո մինչ ավարտն ընկած ժամանակահատվածում մշտական բնակության վայրը փոխած ընտրողների գրանցման կարգը: Նրանք ընդգրկվում են նոր բնակության վայրի ընտրողների ցուցակում՝ հանվելով նախկին բնակության վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից⁴⁷:

Այն դրույթը, որ ընտրողներն իրավունք ունեն ընդգրկվելու միայն ընտրողների մեկցուցակում, օրենքով ամրագրված է Հայաստանում և համեմատության ենթարկված բոլոր երկրներում: Դա ընտրական կարևոր հավասարության սկզբունքի՝ «մեկ ընտրող՝ մեկ ձայն» պահանջի կարևոր երաշխիքներից մեկն է:

Ընտրողների ցուցակները սովորաբար մշտապես վարվող փաստաթղթեր են և վերանայվում են որոշակի պարբերականությամբ:

Օրինակ՝ «Հնտրական օրենսգրքի 9 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանում ընտրողների գուցակները վերանայվում են լուրաբանչութ տարրա հունվար և հունիս

⁴⁴ Տես 1991թ. հուլիսի 3-ին ընդունված «ՍԵԿՄԻ բնտրությունների մասին» Լեհաստանի օրենքի h.13, «Նայ ձի էե էշանձանք ն օճան ի ի ա ռոճան Օայ ձձանք ի է է Ա ռո չ ի Է Աճան ի ս էշ 179:

⁴⁵ Տես «Ալբանիայի Հանրապետության Ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին» օրենքի 25 հոդված, Մոլորդայում 1993թ. հոկտեմբերի 14-ին ընդունված «Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքի h.29-Նույն տեղում, էջ 17, 165:

⁴⁶ Տես «ՍԵՐՋԻ ԻՆՍՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» Լիհաստանի օրենքի h.22-Նույն տեղում, էջ 180:

⁴⁷ Տես «Անդրադաստիթուառ պատճեն» Ղամակապ Ծառքը հ.22 Ընյա մարտ, էջ 1:

ամիսներին: *Սակայն օրենքով չի սահմանվում թէ ինչպես պետք է ցուցակներից հանվեն դրանցում ներառված լինելու իրավունքը կորցնող անձինք կամ ընդգրկվեն այդ իրավունքը ձեռք բերած նոր ընտրողներ:*

Այդ առումով շատ հետաքրքիր է ընտրողների գրանցման իրավակարգավորման Ուումինիայի պրակտիկան, որտեղ օրենքում ամրագրված է՝ »ընտրողների ցուցակները մշտական և հատուկ փաստաթուղթ են«: Դրանք նորացվում են ամեն տարվա հունվար ամսին, ինչպես նաև ընտրությանների օրը նշանակելուց հետո 15 օրվա ընթացքում: Ընտրողների ցուցակներից պետք է հանվեն.

1. մահացած անձինք՝ հանրային գործառույթների իրականացման տեղական ծառայությունների կողմից տեղեկացման հիման վրա: Այդ ծառայություններն են գրանցում մահացածներին, և նրանք պարտավոր են տեղեկացնել այդ մասին 24 ժամվա ընթացքում,
2. ռումինական քաղաքացիությունից գրկված անձինք՝ արդարադատության նախարարության կողմից տեղեկացման հիման վրա,
3. ընտրական իրավունքից գրկված անձինք՝ պետական հաստատությունների կողմից տեղեկացման հիման վրա⁴⁸:

Քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրենց սահմանադրական բազային իրավունքներն իրականացնելիս հանդես են գալիս որպես ընտրական գործընթացի տարբեր սուբյեկտներ. ակտիվ ընտրական իրավունքի դեպքում՝ որպես ընտրողներ, պասիվ ընտրական իրավունքի դեպքում՝ թեկնածուներ:

Պասիվ ընտրական իրավունքը ներկայացուցական իշխանության մարմնի կազմում կամ ընտրովի պաշտոնում անձամբ ընտրվելու քաղաքացիների հնարավորությունն է, որը վերապահվում է յուրաքանչյուր քաղաքացու, սակայն իրագործվում է սակավաթիվ ընտրողների կողմից:

[Գլուխ 2. Խորհրդարանական ընտրություններում պատգամավորության թեկնածուների իրավական կարգավիճակի հիմունքները](#)

Խորհրդարանական ընտրությունների ընտրական գործընթացի հաջորդ սուբյեկտը պատգամավորության թեկնածուներն են: Այդ կարգավիճակում են հանդես գալիս քաղաքացիները՝ իրենց պասիվ ընտրական իրավունքն իրականացնելիս:

Պասիվ ընտրական իրավունքը՝ դա քաղաքացիների սահմանադրական իրավունքն է ընտրվել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ: Պասիվ ընտրական իրավունքը քաղաքացու մոտ չի ծագում պատգամավորության թեկնածու գրանցման պահից: Այդ իրավունքն ունի օրենստրությամբ սահմանված պահանջները բավարարող յուրաքանչյուր քաղաքացի: Պասիվ ընտրական իրավունքը պաշտպանվում է

⁴⁸ Տես «Աննատի և ներկայացուցիչների պալատի ընտրությունների մասին» N 68/1992 Ուումինիայի օրենքի 7, 9 հ.հ.-Նույն տեղում, էջ 203:

ընտրական իրավունքի նորմերով և ինստիտուտներով՝ ընտրական գործընթացի բոլոր փուլերում:

Ի տարբերություն ակտիվ ընտրական իրավունքի, պահիվ ընտրական իրավունքի իրականացումը կախված չէ միայն քաղաքացու կամքից: Քաղաքացու՝ խորհրդարանի պատգամավոր ընտրվելը հնարավոր է, եթե նրա թեկնածությունը աջակցության արժանանա անմիջական ընտրողների կամ ընտրական միավորումների կողմից՝ առաջադրման և գրանցման փուլում, ինչպես նաև նա քվեարկության ընթացքում ստանա անհրաժեշտ ծայներ: **Պետությունը միայն ապահովում է քաղաքացիների համար խորհրդարան ընտրվելու հավասար պայմաններ:**

Թեկնածուն այն անձն է, որ քվեարկում է որոշակի պաշտոնի կամ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համապատասխան ներկայացուցչական մարմիններ ընտրվելու համար⁴⁹: Առաջին դեպքում նա պաշտոնի թեկնածու է, իսկ երկրորդ դեպքում՝ պատգամավորության թեկնածու:

Սույն աշխատանքը վերաբերում է օրենսդիր պետական իշխանության համապատասխան ներկայացուցչական մարմնի թեկնածուների իրավական կարգավիճակի ուսումնասիրությանը:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ընտրական օրենսդրության մեջ թեկնածուների մասին խոսվում է երկու համատեքստով՝ թեկնածուներ՝ մինչ ընտրական հանձնաժողովների կողմից իրենց գրանցումը և գրանցված թեկնածուներ: Արտասահմանյան երկրների ընտրական օրենսդրություններում թեկնածուի մասին խոսելիս, որպես կանոն, ենթադրվում է սահմանված կարգով առաջադրված անձը, այսինքն՝ ոչ միայն արդեն որպես թեկնածու գրանցված անձը⁵⁰: Միաժամանակ շատ ռուսական գիտնականներ գտնում են, որ պատգամավորության թեկնածուների իրավական կարգավիճակը ծագում է համապատասխան ընտրական հանձնաժողովում նրանց գրանցման պահից⁵¹:

Մեր կարծիքով, երկու մոտեցումներն ել իիմնավորված են: Այնուամենայնիվ, պատգամավորության թեկնածուների կարգավիճակն ամբողջ ծավալով կարող է իրացվել միայն գրանցումից հետո: Այդ պահից է նրանց վրա տարածվում պատգամավորության թեկնածուների գործունեության բոլոր երաշխիքները:

Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Ե. Պոստնիկովը, պատգամավորության թեկնածուի կարգավիճակը՝ դա նրա իրավունքների, պարտականությունների և գործունեության երաշխիքների ամբողջությունն է⁵²:

Նախ անդրադառնանք պատգամավորության թեկնածուների սահմանադրական իրավական կարգավիճակին:

⁴⁹ Տես Պոստников А. Е. Избирательное право России. М.: ÈÍ ÔÐÀ:Ì -Í Î ÐÌ À, 1996, էջ 64:

⁵⁰ Տես Canada Elections Act. 1990, P.1.

⁵¹ Տես Избирательное право и Избирательный процесс в Российской Федерации, էջ 193:

⁵² Տես Постников А. Е.-Նշված աշխ., էջ 65:

« 2.1. Պատգամավորության թեկնածուներին առաջադրվող սահմանադրական

պահանջները

Բոլոր երկրների սահմանադրություններում, որպես կանոն, ամրագրված են պասիվ ընտրական իրավունքը կարգավորող խիստ և ընդգրկուն ցենզեր. տարիքային, քաղաքացիության, մշտաբնակության և այլն: Դրանք լրացուցիչ պահանջներ են, որոնց պետք է համապատասխանեն որևէ պաշտոնում ընտրվող (տվալ դեպքում խորհրդարանի պատգամավոր) բոլոր քաղաքացիները:

Համենատության Ենթարկված Երկրներում պատգամավորության թեկնածուների համար տարիքային, քաղաքացիության, մշտաբնակության և մյուս ցենզերը տարբեր են և, ի տարբերություն ընտրողների ակտիվ ընտրական իրավունք ձեռք բերելու համար սահմանված ցենզերի, շատ ավելի խիստ են:

Օրինակ՝ ուսումնասիրված երկրներից տարիքային ցենզն ավելի բարձր է Աղրբեջանում, Ղրղզստանում, Ղազախստանում, Վրաստանում, Տաջիկստանում, Լիտվայում, Ուզբեկստանում⁵³: Այդ երկրներում, ինչպես և Հայաստանում, պատգամավոր կարող են ընտրվել 25 տարին լրացած քաղաքացիները:

Որոշ երկրներում մեծ քաղաքականություն երիտասարդների մուտքի հնարավորությունն ավելի ընդլայնվում է, այդ իսկ պատճառով պատզամավորության թեկնածուների համար սահմանված է ավելի ցածր տարիքային ցենզ:

Օրինակ, Լատվիայի Սեյմի, Էստոնիայի Պետական ժողովի, Բելառուսի և ՌԴ խորհրդարանների ստորին պալատների անդամներ կարող են ընտրվել 21 տարին լրացած քաղաքացիները⁵⁴:

Որպես կանոն, երբ խորհրդարանն ունի 2 պալատ, տարիքային ցենզոն ավելի բարձր է վերին պալատ ընտրվող թեկնածուների համար: Օրինակ, Բելառուսի և Ղազախստանի սենատների անդամներ կառող են ընտրվել 30 տարին լրացած քաղաքացիները⁵⁵:

Կարևոր սահմանադրական ցենզերից մեկն է մշտաբնակության ցենզը, որն ընտրվելու իրավունք է վերապահում միայն այն քաղաքացիներին, ովքեր օրենքով սահմանված կարգով որոշակի ժամանակահատված մշտապես բնակվում են տվյալ պետության տարածքում: Այս ցենզը գործում է շատ պետություններում, սակայն ամենուր ունի իր առանձնահատկությունները: Որոշ երկրներ մշտաբնակության ցենզը սահմանում են միայն խորհրդարանի վերին պալատի՝ Սենատի անդամ դաշնալու հավակնություն ունեցող թեկնածուների համար: Օրինակ, Բելառուսի Սենատ ընտրվող թեկնածուն պետք է առնվազն 5 տարի բնակված լինի համապատասխան մարզի կամ Մինսկ քաղաքի տարածքում: Իսկ

⁵³ Уշատաքում օգտագործված մնջբերումները ԱՊՀ և բալթյան երկրների սահմանադրություններից տրված են հետևյալ ժողովածուից՝ Новые Конституции стран СНГ и Балтии. сборник документов. Вып. 2.-М.: Манускрипт, Юрайт, 1998:

⁵⁴ Տես Լատվիայի Սահմանադրության Բ բաժնի հ.9, Էստոնիայի Սահմանադրության հ.60, Բելառուսի Սահմանադրության հ.92, ՈՒ Սահմանադրության հ.97 կետ 1-Նովые Конституции стран СНГ и Балтии", էջ 572, 636, 155, 383:

⁵⁵ Տես Ընթացության աղքատության հ.92, Ղազախստանի Սահմանադրության հ.51 կետ 4-Նույն տեղում, էջ 155, 244:

Ներկայացուցիչների պալատի պատգամավոր ընտրվելու համար մշտաբնակության ցենզ Սահմանադրությամբ նշված չէ⁵⁶:

Ղրղստանում ևս մշտաբնակության պահանջը առնվազն 5 տարի է, բայց, ի տարբերություն վերոնշյալի, այստեղ երկու պալատների պատգամավորության թեկնածուների համար սահմանված են նույն ցենզերը⁵⁷:

Հետաքրքիր է նշել, որ Էստոնիայի Հանրապետության Պետական ժողովի անդամ ընտրվելու համար մշտաբնակության և անգամ երկրում բնակվելու պահանջ ընդհանրապես սահմանված չէ ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ »Պետական ժողովի ընտրությունների մասին« օրենքով⁵⁸:

Նմանապես, մշտաբնակության ցենզ ընդհանրապես սահմանադրական նակարդակով սահմանված չէ Վրաստանի խորհրդարանի, ՌԴ Պետական դումայի, Տաջիկստանի Օլի Մաժլիսի և Լատվիայի Սեյմի պատգամավորության թեկնածուների համար⁵⁹:

ԱՊՀ և բալթյան երկրներում Սահմանադրությամբ հիմնականում ամրագրված են մշտաբնակության հետևյալ ցենզերը: Պատգամավորության թեկնածուն պետք է բնակված լինի երկրի տարածքում՝ Ղազախստանում, ՌՀ Սենատ ընտրվելու համար՝ առնվազն 3 տարի, Ղրղզստանում, Ուկրաինայում՝ առնվազն 5 տարի: Իսկ Լիտվայում պահանջվում է, որ պատգամավորության թեկնածուն միայն մշտապես բնակվի երկրում⁶⁰:

Հետաքրքրական է, որ նախկինում 1994թ. դեկտեմբերի 22-ի փոփոխություններով, «Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի 2 հոդվածի համաձայն՝ Ուկրաինայի Գերագույն Ռադայի ժողովրդական պատգամավոր ընտրվելու համար քաղաքացին պետք է առնվազն վերջին 2 տարին մշտապես բնակվեր երկրի տարածքում: Փաստորեն, 1996թ. հունիսի 28-ին ընդունված նոր Սահմանադրությունը 3 տարով խստացրել է մշտաբնակության պահանջը:

Բոլոր երկրներում խորհրդարանի ընտրությունների վերաբերմամբ գործում է թեկնածուների քաղաքացիության ցենզը: Սակայն, որպես կանոն, ամրագրված է միայն ընտրությունների օրը քաղաքացի համայնքայու պահանջը:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 64 հոդվածով պահանջվում է, որ պատգամավորության թեկնածուն վերջին 5 տարում հանդիսանա Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Նմանատիպ խիստ պահանջ սահմանված է միայն Ղազախստանում՝ և միայն Մենատի պատգամավորության թեկնածուների համար, այն

⁵⁶ Տես Բնիառուսի Սահմանադրության հ.92-Նույն տեղում, էջ 155:

⁵⁷ Տես Ղրղզական Սահմանադրության հ.56 կետ 1-Նույն տեղում, էջ 290:

⁵⁸ Տես Հասոյնիայի Սահմանադրության (Հիմնական օրենքի) h.60-Նոյն տեղում, էջ 636 և 1996թ.ընդունված «Պետական ժողովի բնտրությունների մասին» օրենքի h.2-Նայ ծի է՛ էցածձածածն ս ծակն ի ա լոձաւ Օք ձձածն ի է է Ան ոու ։ ի է Անձ ի ս Եց 382:

⁵⁹ Տես Վրաստանի Սահմանադրության հ.49, Ո՞ւ Սահմանադրության հ.97, Տաջիկստանի Սահմանադրության հ.48 և Լատվիայի Սահմանադրության հ.9- "Новые Конституции стран

⁶⁰ Տես Ղազախստանի Սահմանադրության h.51 կետ 4, Ղրղզստանի Սահմանադրության h.56, Ուկրաինայի Սահմանադրության h.76, Լիտվայի Սահմանադրության h.56-Նույն տեղում, էջ 244, 290, 527, 593:

Էլ համեմատաբար մեղմ՝ պահանջվում է առնվազն 5 տարվա, այլ ոչ թե վերջին 5 տարվա քաղաքացիություն⁶¹:

«Սահմանադրությամբ ամրագրված այս ցենզն, այնքան էլ հիմնավորված չէ, ինչի մասին վկայում է նաև այդ հարցի իրավակարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը։ Կարծում ենք, նպատակահարմար է նշել մինչև ընտրությունների օրը քաղաքացի լինելու պայմանը՝ թողնելով նշտարնակության 5 տարվա պահանջը։»

Ելմելով իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքից, բոլոր երկրների սահմանադրություններն արգելում են խորհրդարանի՝ որպես մշտապես գործող օրենսդիր մարմնի, անդամին (պատգամավորին), գրադեցմել պետական այլ պաշտոն, ծավալել ծեռնարկատիրական գործունեություն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Այսպես՝ «Սահմանադրության 65 հոդվածի համաձայն՝ »Պատգամավորը չի կարող գրադեցմել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»։

Բելառուսի Հանրապետության Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ խորհրդարանի վերին պալատի՝ Սենատի, անդամները չեն կարող միաժամանակ լինել կառավարության անդամներ, սակայն ստորին Ներկայացուցչական պալատի անդամները կարող են միաժամանակ լինել կառավարության անդամներ։ Իսկ Ղրղզստանի Սահմանադրության 56 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պատգամավորը կարող է գրադեցել գիտական, մանկավարժական և այլ ստեղծագործական գործունեությամբ, եթե այդ գործունեությունը վնաս չի հասցնում նրա պատգամավորական պարտականությունների կատարմանը⁶²։

Այսինքն, պետական այլ պաշտոն գրադեցնող, ծեռնարկատիրական գործունեությամբ գրադպող կամ, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, վճարովի այլ աշխատանք կատարող անձինք պետք է համապատասխանաբար հրաժարական տան, թողնեն իրենց վերոնշյալ գործունեությունը՝ ընտրություններից հետո կամ մինչև ընտրությունները։

Միաժամանակ նշենք, որ աշխարհի գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում ամրագրված է ընտրությունները հավասար ընտրական իրավունքի հիման վրա անցկացնելու սկզբունքը, որը ենթադրում է, որ պատգամավորության թեկնածուների համար պետք է սահմանվի հավասարություն ապահովող պահանջներ, այդ թվում նաև՝ պետական այլ պաշտոններ գրադեցնել արգելող պահանջը։ Այս խնդիրը Հայաստանում, Ռուսաստանում, Արմենիայում, Ադրբեյջանում, Աղյանայում, Մոլդովայում, Լիտվայում, Ղազախստանում և այլ երկրներում ընտրությունների անցկացման և պետական իշխանության իրականացման սկզբունքները միասնական և փոխկապված դիտարկելով, կարգավորվել է պատգամավորության թեկնածուների համար սահմանելով յուրահատուկ ցենզեր՝ անհամատելելիության, »ընտրվելու անկարողության« և այլն։ Նշված պահանջները

⁶¹ Տես Ղազախստանի Սահմանադրության հ.51-ի կետ 4-Նույն տեղում, էջ 244։

⁶² Տես նույն տեղում, էջ 155-156, 290։

որոշ երկրներում ամրագրվում են սահմանադրություններում, մյուսներում ավելի լայն կարգավորվում են ընտրական օրենսդրությամբ (օրենսգրքերով, օրենքներով): Այդ ցենզերին դեռ կանդրադառնանք ուսումնասիրված երկրների ընտրական օրենսդրություններով սահմանված պատգամավորության թեկնածուների կարգավիճակի հիմնահարցերը քննարկելիս:

Պատգամավորության թեկնածուների համար առկա են *Սահմանադրությամբ* ամրագրված շատ հետաքրքիր և ուշադրության արժանի ցենզեր:

Ներկայացնենք դրանց որոշ յուրահատկություններ:

Օրինակ, Ղազախստանում, Սահմանադրության 51 հոդվածի համաձայն՝ սենատորները պետք է ունենան բարձրագույն կրթություն և առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ: Իսկ Ուկրաինայի Սահմանադրության 76 հոդվածի համաձայն՝ Գերագույն Ռադայի անդամ չեն կարող ընտրվել այն քաղաքացիները, որոնք ունեն դատվածություն (դիտավորյալ հանցագործության կատարման համար), և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարված կամ հանված չէ⁶³:

Արդեօանում, ըստ Հանրապետության Սահմանադրության 92 հոդվածի՝ պատգամավոր չեն կարող ընտրվել երկբաղաքացիություն ունեցող անձինք, կրոնի (եկեղեցու) սպասավորները⁶⁴:

Բուլղարիայի Հանրապետությանում ևս թեկնածուների համար գործում է երկբաղաքացիության բացառման սահմանադրական պահանջը: Այսպես՝ Բուլղարիայի Սահմանադրության 65 հոդվածի 1-ին կետն ամրագրում է. »Ազգային ներկայացուցիչ կարող է ընտրվել Բուլղարիայի քաղաքացին, որն այլ քաղաքացիություն չունի...«⁶⁵:

Ընտրական ցենզերի կարգավորման փորձն էապես տարբերվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում⁶⁶:

Մասնավորապես, մի շաբթ երկրներում սահմանադրություններն ընդհանրապես չեն անդրադառնում պասիվ ընտրական իրավունքի ցենզերին (Հունգարիա, Ալբանիա⁶⁷) կամ ամրագրում են ընդհանուր սահմանադրական նորմ-սկզբունք, որ խորհրդարանի ընտրությունների պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Օրինակ, Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրության 72 հոդվածում ամրագրված է. »Խորվաթիայի Սաբորի պալատների պատգամավորների թիվը, նրանց ընտրության պայմանները և կարգը սահմանվում են օրենքով«: Իսկ Սլովենիայի

⁶³ Տես նոյն տեղում, էջ 244, 527:

⁶⁴ Տես նոյն տեղում, էջ 74:

⁶⁵ Մանրամասն տես "Конституции государств Центральной и Восточной Европы", Отв. ред. Н.В. Варламова.-М; 1997, էջ 70:

⁶⁶ Աշխատանքում օգտագործված մեջքերումները կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների (Ալբանիա, Բուլղարիա, Հունգարիա, Լիհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Խորվաթիա, Չեխիա) սահմանադրություններից տրված են հետևյալ ժողովածուից "Конституции государств Центральной и Восточной Европы", Отв. ред. Н.В. Варламова.-М; 1997:

⁶⁷ Տես Հունգարիայի Սահմանադրության հ.70, «Հիմնական սահմանադրական դրույթների մասին» Ալբանիայի սահմանադրական օրենքի II գլուխ, 15-23 հ.հ.-Նոյն տեղում, էջ 128, 19:

Սահմանադրության 82 հոդվածն ամրագրում է, որ օրենքով է սահմանվում, թե ով չի կարող ընտրվել Պետական ժողովի պատգամավոր⁶⁸:

Մակեդոնիայի Հանրապետության Սահմանադրության 61-62 հոդվածների համաձայն՝ Մակեդոնիայի Ասամբլեայի կազմավորումը և գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ և օրենքով: Ասամբլեայի ներկայացուցիչների ընտրության կարգը և պայմանները սահմանվում են օրենքով՝ ընդունված Ասամբլեայի ներկայացուցիչների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով⁶⁹:

Պետք է նշենք, որ Եվրոպական Երիտասարդ ժողովրդավարության Երկրների սահմանադրություններում ամրագրված ամենամեղմ տարիքային պահանջները Հունգարիայի և Սլովենիայի հանրապետություններում են:

Այսպես՝ Սլովենիայում, Հանրապետության Սահմանադրության 43 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր 18 տարեկան դարձած քաղաքացի իրավունք ունի ընտրել և ընտրվել: Իսկ Հունգարիայի Սահմանադրության 70.(1) հոդվածի համաձայն՝ ...Հունգարիայի յուրաքանչյուր չափահաս քաղաքացի Հունգարիայի Պետական ժողով ընտրվելու իրավունք ունի, եթե ընտրությունների օրը գտնվում է Երկրի տարածքում...⁷⁰

Ըստ Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 99 հոդվածի՝ Սեյմի անդամության թեկնածուների համար սահմանվում է 21, իսկ Սենատորների համար՝ 30 տարին լրացած լինելու տարիքային ցենզերը:

Ումինիայի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածի մաս 2-ի համաձայն՝ Ումինիայի Պատգամավորների պալատ կարող են ընտրվել առնվազն 23 տարին, իսկ Սենատ՝ առնվազն 35 տարին լրացած Ումինիայի քաղաքացիները: Սա, ըստ էության, Եվրոպական Երիտասարդ ժողովրդավարության Երկրների սահմանադրություններում ամրագրված ամենախիստ պահանջներից է:

Նմանատիպ ցենզեր են սահմանված Զեխիայի Հանրապետությունում: Այսպես՝ Զեխիայի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի համաձայն՝ խորհրդարանի ստորին պալատի պատգամավոր կարող է ընտրվել 21 տարին լրացած, իսկ Սենատ՝ 40 տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Զեխիայի Հանրապետության քաղաքացին: Այստեղ մշտաբնակության ցենզի մասին խոսք չկա⁷¹:

Լեհաստանի Սահմանադրությամբ նույնպես մշտաբնակության ցենզ ընդհանրապես ամրագրված չէ, իսկ քաղաքացիության ցենզը շատ մեղմ է՝ բավական է ընտրությունների օրը լինել Լեհաստանի քաղաքացի:

Մինչեւ, Սլովակիայի Սահմանադրության 74 հոդվածը սահմանում է, որ Սլովակիայի Ազգային խորհրդի պատգամավոր կարող է ընտրվել 21 տարին լրացած, մշտապես Սլովակիայի տարածքում բնակվող Սլովակիայի Հանրապետության քաղաքացին⁷²:

⁶⁸ Մանրամասն տես նույն տեղում, էջ 439, 381:

⁶⁹ Մակեդոնիայի Սահմանադրությունից մեջընդունման տրված է ՀՀ ՍԴ «ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» տեղեկատվական քազայից, <http://www.concourt.am>, թարգմանությունը Լ. Սիմոնյանի:

⁷⁰ Տես "Конституции государств Центральной и Восточной Европы", էջ 372, 128:

⁷¹ Տես նույն տեղում, էջ 220, 274, 490:

⁷² Տես նույն տեղում, էջ 220, 334:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ ԱՊՀ երկրներում պասիվ ընտրական ցենզերը շատ ավելի խիստ են (և տարիքային, և մշտաբնակության, և քաղաքացիության) և բազմազան, քան նախկին սոցիալիստական, եվրոպական երիտասարդ ժողովրդավարության պետություններում: Վերջիններիս սահմանադրություններում ամրագրված ընտրական ցենզերը շատ ավելի մեղմ են և մոտ գարգացած երկրների սահմանադրություններում ամրագրված ընտրական ցենզերին:

« 2.2. Պատգամավորության թեկնածուներին ընթացիկ օրենսդրությամբ արածադրվող պահանջները

Պասիվ ընտրական իրավունքի ցենզերի միայն մի մասը և այն էլ շատ ընդհանուր ծևով են սահմանված սահմանադրություններում: Տարիքային, քաղաքացիության, մշտաբնակության և այլ ցենզեր ավելի հանգամանալից ամրագրված են տվյալ երկրի խորհրդարանական ընտրությունները կարգավորող ընթացիկ ընտրական օրենսդրությամբ (օրենսգրքերով կամ օրենքներով):

Այսպես՝ Մոլդովայում պատգամավորության թեկնածուների համար օրենքով սահմանված է 21 տարին լրացած լինելու տարիքային ցենզը⁷³: Հետաքրքիր է, որ Լիտվայում, 1992թ. հուլիսի 9-ին ընդունված »Սեյմի ընտրությունների մասին« օրենքը ևս սահմանել էր 21 տարին լրացած լինելու տարիքային ցենզը⁷⁴: Սակայն 1992թ. հոկտեմբերի 25-ին հանրաքվեով ընդունված Լիտվայի Հանրապետության Սահմանադրությամբ տարիքային ցենզը խստացվեց և ամրագրվեց 25 տարին լրացած լինելու սահմանադրական պահանջը⁷⁵:

Մինչդեռ, Խորվաթիայի Սաբորի պալատների և Մակեդոնիայի Ասամբլեայի ներկայացուցիչներ կարող են ընտրվել այդ երկրների 18 տարին լրացած քաղաքացիները⁷⁶:

Հետաքրքիր մշտաբնակության ցենզ է սահմանված Ալբանիայի Հանրապետությունում: Ըստ 1992թ. փետրվարի 4-ին ընդունված »Ալբանիայի Հանրապետության ժողովրդական ասամբլեյի ընտրությունների մասին« օրենքի 2 հոդվածի՝ »ժողովրդական ասամբլեյի պատգամավոր ընտրվելու իրավունք ունեն բոլոր անձինք, որոնք ընտրությունների պահին արդեն 21 տարեկան են, Ալբանիայի քաղաքացիներ են և մշտապես բնակվում են կամ գրավոր կարգով հաստատում են, որ ընտրություններից հետո մշտապես կրնակվեն Ալբանիայի Հանրապետության տարածքում«⁷⁷:

Հետաքրքրական է, որ Լատվիայի Հանրապետության »5-րդ Սեյմի ընտրությունների մասին« օրենքի 3 հոդվածի համաձայն՝ կալանքի տակ վերցված, հետաքննության տակ գտնվող կամ հանցանորության մեջ մեղադրվող այն անձինք, որոնց համար որպես

⁷³ Στίν «Ιωνηρηπαρανήν ή ρητορικήν ή μασικήν» Η πληνψαή ορθεύρη h.2-“Νάι δί εἶ ἐξάὲδαδάειν’ ί ο δαέιν’ ί ί ή ποδάρι Οάι δδαειν’ ί ε ἐ Αί η ποδάρι ί ί ή άλδι ί ί ή”, τε 160:

⁷⁴ Տես Նույն տեղում, էջ 118

⁷⁵ См. "Новые Конституции стран СНГ и Балтии", № 593:

⁷⁶ Տես «Խորքաթիայի Հանրապետության Խորհրդարանի (Սաբորի) ներկայացուցիչների ընտրությունների մասին» օրենքի h.3, «Մակենդնիայի Հանրապետության «Ասամբլեայի ներկայացուցիչների և անդամների ընտրությունների և նույնազի մասին» օրենքի h.2-Նույն տեղում, էջ 340, 148:

մեկուսացման միջոց ընտրված է բանտարկությունը, կորցնում են ծայնի իրավունքը, բայց կարող են ընտրվել: Լատվիայի քաղաքացին՝ »5-րդ Սեյմի ընտրությունների մասին« օրենքի 21 հոդվածի համաձայն կարող է առաջադրվել Սեյմի պատգամավորության թեկնածու, եթե նրա պետական հիմնարկներում աշխատելու կամ կառավարությունում որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքն օրենքով սահմանված կարգով սահմանափակված չէ⁷⁸:

Այժմ անդրադարձնանք պատգամավորության թեկնածուների համար տարբեր երկրների ընտրական օրենսդրություններով (օրենքներ, օրենսգրքեր) սահմանված անհամատեղելիության և »ընտրվելու անկարողության« ցենզերի յուրահատկություններին:

Անհամատեղելիությունն այն է, որ ընտրվելու ենթակա չէ որոշակի պաշտոն զբաղեցնող, ընտրովի մանդաստ ունեցող կամ որոշակի զբաղմունքի տեր անձը (եթե մտադիր չէ իրաժարվել դրանցից)⁷⁹:

Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 97 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները, փոխնախարարները, Երևանի քաղաքապետը, փոխքաղաքապետը, մարզպետները, փոխնարզպետները, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), գինծառայողները, սոցիալական ապահովության մարմինների (ծառայությունների) աշխատակիցները:

Կուսակցական ցուցակներով թեկնածու առաջադրվելու համար օրենքով սահմանափակումներն ավելի մեղմ են:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), գինծառայողները:

Վերոնշյալ անձինք, ՀՀ ընտրական օրենսգրքի 97 հոդվածի 2-3-րդ կետերի համաձայն, համապատասխանաբար Ազգային ժողովի մեծամասնական կամ համամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել միայն իրենց լիազորությունները վայր դնելու դեպքում:

Մինչ պատգամավորության թեկնածու գրանցվելը զբաղեցրած պաշտոնից ազատվելու այսպիսի պահանջ գործում է նաև Վրաստանում: Սակայն այնտեղ անհամատեղելիության շրջանակը շատ ավելի լայն է: Կարելի է ասել, որ Վրաստանն ուսումնասիրված երկրներից միակն է ուր անհամատեղելիությունը տարածվում է ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական հնարավոր ազդեցություն ունեցող (այդ թվում՝ ֆինանսական, էներգետիկ, գույքային ոլորտներում) պաշտոնների խիստ ընդգրկուն խմբի վրա: Համաձայն 1999թ.

⁷⁷ Մանրամասն տես նոյն տեղում, էջ 14:

⁷⁸ Տես նոյն տեղում, էջ 108, 111:

⁷⁹ Տես "Է՛ ի ո՞ծէօծէ ի ի ա (ա՛ ո՞ծածնօձ ի ա ա) ի ծահա չածնա ա ս օ ո՞ծձա է էջ 332:

հոկտեմբերի 1-ի փոփոխություններով և լրացումներով »Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին« Վրաստանի օրգանական օրենքի 36 հոդվածի՝ »Վրաստանի Նախագահը, ներկայացուցչական և պետական Ենթագերատեսչական իիմնարկների ղեկավարները, նրանց տեղակալները, Վրաստանի Անվտանգության խորհրդի անդամները, Վրաստանի ազգային բանկի խորհրդի անդամները, Վրաստանի Վերահսկիչ պալատի նախագահը և նրա տեղակալները, Վրաստանի Խորհրդարանի աշխատակազմի ղեկավարը, Վրաստանի Նախագահի լիազորները և նրանց տեղակալները, տեղական ինքնակառավարման և շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, շրջանային Ենթակայության քաղաքների կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները (քարտուղարները), ներքին գործերի, պաշտպանության և պետական անվտանգության նախարարությունների, հետախուզության և պետական սահմանի պաշտպանության և Վրաստանի Պետական պահպանության հատուկ ծառայության պետական վարչությունների սպաները, դատավորները և նրանց օգնականները, Վրաստանի ժողովրդական Պաշտպանը և նրա տեղակալները, Վրաստանի Նախագահին կից խորհրդակցական մարմնի անդամները (որոնք Խորհրդարանի անդամներ չեն), Վրաստանի նախագահի օգնականները, Առողջության գործունեության խորհրդի, Վրաստանի Արժեթղթերի ազգային հանձնաժողովի, Վրաստանի Հաշվապահական հաշվառման ստանդարտենրի հանձնաժողովի, Վրաստանի Ենթագետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի անդամները, Պաշտոնատար անձանց ֆինանսկան և գույքային դրության տեղեկատվական բյուրոյի նախագահը և նախագահի տեղակալները, ինչպես նաև դատախազները, նրանց տեղակալները, օգնականները, քննիչները չեն կարող առաջադրվել Խորհրդարանի անդամության թեկնածուներ, եթե մինչ գրանցումը չազատվեն գրառեցրած պաշտոնից»⁸⁰:

Մինչեւ, Ուկրաինայում վերոնշյալ պահանջն ավելի մեղմ է: 1994թ. ղեկտեմբերի 22-ի փոփոխություններով »Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին« օրենքի 2 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ թեկնածուի գրադեցրած անհամատեղելի պաշտոնի ծառայողական լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են նախընտրական արշավի ժամանակահատվածում՝ ընտրվելու դեպքում պաշտոնից ազատվելու պայմանով: Այսպիսով՝ Ուկրաինայում պատգամավոր չեն կարող ընտրվել Ուկրաինայի այն քաղաքացիները, որոնք ընտրությունների օրը գտնվում են զինծառայության կամ այլընտրանքային (ոչ գինվորական) ծառայության մեջ:

Զինված ուժերի, Ազգային գվարդիայի, Անվտանգության ծառայության, ներքին գործերի նախարարության և Ուկրաինայի այլ գինված կազմավորումների անձնակազմի սպաները, կրտսեր և միջին սպաները, որոնք պաշտոնաթող չեն եղել, ինչպես նաև Ուկրաինայի Նախագահի ներկայացուցիչները տեղերում, դատավորները, դատախազները կարող են գրանցվել որպես պատգամավորության թեկնածության հավակնորդ, եթե գրանցվելիս

⁸⁰ 1999թ. հոկտեմբերի 1-ի փոփոխություններով և լրացումներով «Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին» Վրաստանի օրգանական նոր օրենքի տեքստի ուսական ոչ պաշտոնական թարգմանությունը տրամադրվել է Վրաստանի սահմանադրական դատարանի կողմից:

մարզային ընտրական հանձնաժողով ներկայացնեն դիմումներ Ուկրաինայի ժողովրդական պատգամավոր ընտրվելու դեպքում իրենց պաշտոնից ազատման համաձայնության և նախընտրական արշավի ժամանակահատվածում իրենց ծառայողական լիազորությունների ժամանակավոր դադարեցման մասին⁸¹:

Իսկ Խորվաթիայում, ըստ »Խորվաթիայի Հանրապետության Խորհրդարանի (Սաբորի) Աներկայացուցիչների ընտրությունների մասին« օրենքի 6 հոդվածի՝ անհամատեղելիության պահանջը տարածվում է արդեն ընտրված թեկնածուի վրա, այսինքն՝ նա կարող է քվեարկվել Աներկայացուցիչ պաշտոնն գրադեցնելու համար, բայց ընտրվելու դեպքում պետք է հրաժարվի Աներկայացուցիչ լիազորությունների հետ չհամատեղվող պաշտոնից, հակառակ դեպքում չի ստանձնի Աներկայացուցիչ պաշտոնը։ Այսպիսով, Խորվաթիայում ոչ ոք չի կարող միաժամանակ լինել Ներկայացուցիչների պալատի և Մարզային պալատի (Խորհրդարանի (Սաբորի) Վերին պալատ) Աներկայացուցիչ։ Ներկայացուցիչները նաև չեն կարող լինել Խորվաթիայի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, դատավոր, դատախազ, փաստաբան, պաշտպան և նրանց տեղակալներ, նախարարի տեղակալ, պետական հիմնարկի և նախարարության մարմնի տնօրեն, Խորվաթիայի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար։

Օրենքով կարող են նաև սահմանվել լրացուցիչ սահմանափակումներ: Նշված պաշտոններից որևէ մեկն զբաղեցնող անձինք կարող են քվեարկվել ներկայացուցչի պաշտոնն զբաղեցնելու համար, բայց ընտրվելու դեպքում նրանք պետք է հրաժարվեն կամ ներկայացուցչի, կամ դրա հետ չհամատեղվող պաշտոնից: Եթե ընտրված ներկայացուցիչը նախընտրում է չհամատեղվող պաշտոնը, ապա նրան փոխարինում է տեղակալ՝ նույնական քվեարկությամբ ընտրված թեկնածուն, իսկ պետական ցուցակներով քվեարկվելու դեպքում այլ պետական ցուցակով ընտրված թեկնածուն⁸²:

Բոլղարիայում, Ազգային ասամբլեայի անդամության թեկնածուները, որոնք զբաղեցնում են պետական պաշտոններ, գրանցումից հետո դադարեցնում են իրենց պարտականությունների կատարումը և գնում են լրիվ վարձատրությամբ արձակուրդ: Ընտրված թեկնածուները, որոնք աշխատում են պետական ծեռնարկություններում, հիմնարկություններում, պետության մասնակցությամբ առևտրային ծեռնարկություններում, որտեղ պետության մասնակցությունը 50%-ից ավելի է, իրենց լիազորությունների ավարտից հետո իրավունք են ստանում վերսկսել աշխատանքը նաև այն դեպքում, եթե այդ աշխատատեղը վերացվել է, կամ ապահովվում են համարժեք աշխատանքով նույն կամ իրենց համաձայնությամբ այլ պետական ծեռնարկությունում, հիմնարկությունում, կազմակերպություններում, պետության 50%-ից ավելի մասնակցությամբ առևտրային ընկերություններում: Եթե ընտրված թեկնածուի նախկին պաշտոնն զբաղեցված է այլ անձի կողմից, վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունները խզվում են առանց նախազգուշացման⁸³:

⁸¹ Sū "Náí ðí èe èçáéðàòäëüí û õ çàéî í î â ñoðàí Öåí ðòäëüí î é è Åí ñòí ðí î é Åðõí ï û ", tq 310:

⁸²Տես նույն տեղում, էջ 340:

⁸³ Տես՝ Անգղիկանության անդամների մոլոնիշպալ խորհուրդների անդամների և քաղաքանեաց ընտրությունների մասին՝ բոլորակայի օրենքի հ.49-Նոյն տեղում, էջ 51:

Ալբանիայի օրենքն ավելի ազատական է և չի պարտադրում պատգամավորության թեկնածուին ընտրարշավի ժամանակ դադարեցնել նախորդ աշխատատեղի ծառայողական պարտականությունների կատարումը: Սակայն օրենքի այդ ընդհանուր պահանջն ունի բացառություններ, մասնավորապես, իրենց ծառայողական պարտականությունների կատարումը դադարեցնում են Նախարարների կարիքնետի անդամները՝ ընտրություններից 20 օր առաջ: Ընդհանրապես պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել շրջանների, մարզերի, քաղաքների իրավապահ մարմինների և ազգային տեղեկատվական ծառայության դեկավարները:

Լիտվայում Մեյմի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել ընտրությունների օրը գինծառայության կամ այլընտրանքային ծառայության մեջ գտնվող, պահեստագոր չարձակված կամ կրկին ազգային պաշտպանության համակարգ վերադարձած, ինչպես նաև միլիցիայի և ներքին գործերի ծառայության, այլ ռազմական ծառայությունների և անվտանգության ծառայությունների սպաները, որոնք չեն անցել թոշակի:

Ղազախստանում պատգամավորության թեկնածուն չի կարող լինել կենտրոնական կամ ստորադաս ընտրական հանձնաժողովի անդամ: Վերոնշյալ ընտրական հանձնաժողովներից որևէ մեկի անդամ հանդիսացող անձինք պատգամավորության թեկնածու գրանցվելու պահից համարվում են հանձնաժողովի անդամի պարտականություններից ազատված⁸⁴:

Այլ է »ընտրվելու անկարողության« ցենզի ամրագրման միջազգային փորձը:

Մեր կարծիքով, ընտրվելու անկարողությունը դա պասիվ ընտրական իրավունքի ոչ թե ընդհանուր, այլ մասնակի բացակայություն է, որը սահմանվում է հատուկ դեպքերում (հիմնականում որոշակի տարածքի համար):

Հայաստանի Հանրապետությունում »ընտրվելու անկարողության« ցենզ սահմանված չէ: Մինչեւ, այդպիսի ցենզ իրավացիորեն ամրագրված է աշխարհի շատ երկրների ընտրական օրենսդրություններով:

Օրինակ, Ալբանիայում, 1992թ. փետրվարի 4-ին ընդունված »Ալբանիայի Հանրապետության ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին« օրենքի 19 հոդվածի համաձայն՝ գինծառողները չեն կարող առաջադրվել պատգամավորության թեկնածուներ այն մարզերում, որտեղ տեղակայված են իրենց գինմասերը: Իսկ շրջանների, մարզերի և քաղաքների գործկոմների դեկավարները (նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը) այն մարզում պատգամավորության թեկնածու առաջադրվելիս, որտեղ իրականացնում են իրենց լիազորությունները, իրենց պարտականություններից ազատվում են ընտրություններից 20 օր առաջ⁸⁵:

Ուումինիայում, 1992թ. հունվարի 15-ին ընդունված »Սենատի և Ներկայացուցիչների պալատի ընտրությունների մասին« N 68/1992 օրենքի 34 հոդվածի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների դեկավարները, դեկավարների տեղակալները և հասարակական

⁸⁴ Տես «Ալբանիայի Հանրապետության Ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին» օրենքի 19 հոդվածի ա, բ կետերը, «Սեյմի ընտրությունների մասին» Լիտվայի օրենքի h.2,

«Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» օրենքի h.32-Նույն տեղում, էջ 16,

118, 172:

⁸⁵ Տես նույն տեղում, էջ 16:

ծառայությունների պաշտոնատար անձինք չեն կարող իրենց թեկնածությունն առաջադրել վարչատարածքային ստորաբաժանումների ընտրատարածքներում, եթե ընտրությունների անցկացման օրվանից առաջ վերջին 6 ամսվա ընթացքում աշխատել են այդ վարչական տարածքում⁸⁶:

Պատգամավորության թեկնածուների իրավական կարգավիճակը ծագում է համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից գրանցման պահից: Այն բնութագրվում է գրանցված բոլոր անձանց իրավունքների և պարտականությունների հավասարությամբ, բացառությամբ օրենքով սահմանված առանձին դեպքերի: Այդ հավասարությունն ապահովելու համար օրենքով սահմանվում են մի շարք պահանջներ: Այսպես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 110 հոդվածում ուղղակիրեն ամրագրված է, որ բոլոր պատգամավորության թեկնածուներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

Պատգամավորության թեկնածուների կարգավիճակը վերոնշյալ երկու համատեքստով (մինչ գրանցումը և գրանցումից հետո) դիտարկելը իինք է հանդիսացել, որ ՌԴ-ում բոլոր պատգամավորության թեկնածուների հավասար իրավունքներ ունենալու և հավասար պարտականություններ կրելու (օրենքով սահմանվում են բացառությունները) դրույթն ամրագրվում է մի դեպքում պատգամավորության թեկնածուների համար, մյուս դեպքում գրանցված պատգամավորության թեկնածուների համար⁸⁷: Հետաքրքիր է նշել, որ 1995 թ. հունիսի 9-ին ընդունված »ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« ՌԴ նախկին օրենքի 43-44 հոդվածներով սահմանվում էր միայն գրանցված պատգամավորության թեկնածուների կարգավիճակը⁸⁸: Փաստորեն, ՌԴ-ում օրենսդրության զարգացումը գնաց պատգամավորության թեկնածուների իրավական կարգավիճակի առավելապես հանգամանալից կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, ՌԴ խորհրդարանի ստորին պալատի ընտրությունները կարգավորող նոր օրենքն այդ հարցի կարգավորմանը տրամադրեց առանձին նոր գլուխներ և մի շարք նոր հոդվածներ:

Մի շարք երկրներում այդ հավասարությունն արտահայտվում է՝ 1) մրցակցության հավասար ելակետային պայմանների, 2) նախընտրական քարոզության հավասար իրավունքի և 3) պետության կողմից դրա ազատ իրականացման ապահովման դրույթների ամրագրմամբ:

Օրինակ, ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին կետի՝ պետությունն ապահովում է քաղաքացիների նախընտրական քարոզության ազատ իրականացումը: Նմանատիպ դրույթ է ամրագրված Դագախստանի Հանրապետության 1995թ. »Դագախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին« օրենքի 35 հոդվածում:

⁸⁶Տես նույն տեղում, էջ 209:

⁸⁷Մանրամասն տես 1999թ. «ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՌԴ դաշնային օրենքի 41, 48 հ.հ. 1-ին կետերը-«Նά՛ ծի է՛ չա՛ ի ա ԹՇ», էջ 150, 155:

⁸⁸Մանրամասն տես "Նա՛ ծի է՛ չա՛ ի ա ԹՇ" օրենքի 35 հոդվածում:

Որոշ երկրներում, օրինակ՝ Բելառուսում, Լիտվայում, Վրաստանում և այլուր, հավասարության ապահովման համար հիմնականում սահմանված է, որ պատգամավորության թեկնածուները՝ ընտրական հանձնաժողովների կողմից իրենց գրանցման պահից, ունեն նախընտրական քարոզչության, այսինքն՝ նախընտրական և այլ ժողովներում, խորհրդակցություններում, նիստերում, մամուլում, հեռուստատեսությամբ, ռադիոյով հանդես գալու հավասար իրավունք⁸⁹:

Մրցակցության հավասար ելակետային պահմաններ ապահովելու համար »Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին« օրենքի 27 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պատգամավորության թեկնածուին չի թույլատրվում իր ծառայողական դիրքն օգտագործել նախընտրական քարոզչություն ծավալելիս⁹⁰:

ՈՂ-ում նույնաբովանդակ սահմանափակում է ամրագրված միայն »ՈՂ պետական ծառայության հիմունքների մասին« ՈՂ դաշնային օրենքով նախատեսված "A" կատեգորիայի պետական բարձրագույն պաշտոններ գրադեցնող թեկնածուների համար:

Իսկ այն թեկնածուները, որոնք պետական կամ մունիցիպալ ծառայության մեջ են կամ աշխատում են զանգվածային լրատվության միջոցներում, ընտրություններին մասնակցելու ժամանակահատվութում ազատվում են ծառայողական պարտականությունների կատարումից և իրավունք չունեն օգտագործել իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունները: Ընդ որում, այդ անձինք պետք է ոչ ուշ, քան իրենց գրանցումից 3 օր հետո ընտրական հանձնաժողովը ներկայացնեն համապատասխան հրամանի հաստատված պատճենը⁹¹:

Հայաստանում ևս գործում է նման սահմանափակում, որը, սակայն, չի տարածվում զանգվածային լրատվության միջոցներում աշխատողների վրա: << ընտրական օրենսգրքի 111 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այն թեկնածուներն, ովքեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ են, գրանցման պահից մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական իրապարակումն ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելուց:

Հարցի նման լուծումը, մեր կարծիքով, չի ապահովում այնպիսի հավասարություն, ինչպիսին ապահովում է անհամատեղելիության ցենզը: Գտնում ենք, որ օրենսդրական կարգավորման զարգացումը պետք է գնա հենց այն ուղղութամբ, որ պատգամավորության թեկնածու գրանցվելու հավակնություն ունեցող անձանց համար գրադեցրած անհամատեղելի պաշտոնից ազատվելը սահմանվի որպես պարտադիր պայման:

Բոլոր պատգամավորության թեկնածուների միջև հավասար մրցակցության, նախընտրական քարոզչության հավասար իրավունքի ապահովման նպատակով Հայաստանում, ՈՂ-ում, Ալբանիայում և այլ երկրներում որոշ բարձրագույն պաշտոնատար անձանց ընդհանրապես չի թույլատրվում իրականացնել նախընտրական քարոզչություն: Այդ

⁸⁹ Տես «Բնակչության համապետության գնրագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.40, «Սեյմի ընտրությունների մասին» լիտվայի օրենքի h.37-Նույն տեղում, էջ 38, 123:

⁹⁰ Տես նույն տեղում, էջ 318:

արգելքը և այն խախտելու դեպքում օրենսդրությամբ սահմանված խիստ պատժաչափի կիրառումը միասին, հավասարության ապահովման իրական երաշխիք են, քանզի պրակտիկան էլ է դա ապացուցում, որ կատարել նախընտրական քարոզչություն և չօգտագործել պաշտոնեական դիրքի առավելությունները՝ դժվար իրականացնելի խնդիր է:

Հայաստանում, ՀՀ ընտրական օրենսդրքի 18 հոդվածի 4-րդ կետի դրույթն արգելում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել.

1. պետական և տեղական ինքնակարավարման մարմիններին, ինչպես նաև դրանց աշխատակիցներին՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս,
2. սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության, դատախազության մարմինների աշխատակիցներին (ծառայողներին), գինծառայողներին,
3. բարեգործական և կրոնական կազմակերպություններին,
4. օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:

Նույն խնդրին մի փոքր այլ մոտեցում է ցուցաբերված ՈԴ-ում, որտեղ նախընտրական քարոզչություն կատարելու և ցանկացած բնույթի նախընտրական քարոզչական նյութ թողարկելու և տարածելու արգելք սահմանված է.

1. պետական իշխանության դաշնային մարմինների, ՈԴ դաշնությունների պետական իշխանության մարմինների, այլ պետական մարմինների և տեղական ինքնակարավարման մարմինների համար,
2. պետական և մունիցիպալ պաշտոններ գրադեցնող անձանց, պետական և մունիցիպալ ծառայողների, գինծառայողների համար՝ իրենց պաշտոնական կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, ինչպես նաև պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործմամբ,
3. գինմասերի, գինվորական հաստատությունների և կազմակերպությունների համար,
4. բարեգործական կազմակերպությունների և կրոնական միավորումների, ինչպես նաև նրանց կողմից հիմնադրված կազմակերպությունների համար,
5. ընտրական հանձնաժողովների, ընտրական հանձնաժողովների՝ վճռորոշ ձայնի իրավունք ունեցող անդամների համար⁹²:

Իսկ Ալբանիայում, ըստ 1992թ. փետրվարի 4-ին ընդունված »Ալբանիայի ժողովորդական ասամբլեայի ընտրությունների մասին« օրենքի 56-57 հոդվածների՝ նախընտրական քարոզչություն կատարել արգելվում է Ալբանիայի քաղաքացի չիանդիսացող անձանց, ժամանակավոր գործկումների, ինչեւ նաև այլ պետական մարմինների աշխատակիցներին⁹³:

Հաճախ ամրագրվում են նաև նախընտրական քարոզչություն կատարելու գուտ տարածքային սահմանափակումներ: Այսպես՝ Ուումինիայի Հանրապետության »Սենատի և

⁹¹Տես «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դրումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օրենքի h.48-«Նա՛ ծի է՛ չա՛ ի ՝ Թ՛՛», էջ 155:

⁹²Տես «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դրումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օրենքի 52 հոդվածի 3-րդ կետ-Նույն տեղում, էջ 158

⁹³Տես "Նա՛ ծի է՛ չա՛ ի ՝ Թ՛՛ Օ՛ ծծա՛ ի է ՝ Ա՛ նո՛ ՛ է ՝ Ա՛ ծծա՛ ի ՝ ", էջ 21:

Ներկայացուցիչների պալատի ընտրությունների մասին« օրենքի 44 հոդվածի 5-րդ կետի և Ալբանիայի վերոնշյալ օրենքի 55 հոդվածի համաձայն՝ այդ երկրներում արգելվում է նախընտրական քարոզություն ծավալել զինմասերի տարածքում։ Իսկ Ալբանիայում նախընտրական քարոզություն ծավալել արգելվում է նաև զինվորական ստորաբաժանումներում և ապաքաղաքականացված հաստատություններում⁹⁴։

« 2.3. Պատզամավորության թեկնածուների իրավական կարգավիճակը նախընտրական քարոզչության դնացքում

Բոլոր երկրներում պատգամավորության թեկնածուներին նախընտրական քարոզարշավի համար օրենսդրությամբ հատկացված ժամանակը նույն է, բացառությամբ չնչին տարրերությունների:

Այսպիսով, Հայաստանում, «Հ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 5-րդ կետի համաձայն նախընտրական քարոզչությունն սկսվում է պատգամավորության թեկնածուների և կուսակցությունների (թեկնածուների ցուցակների) գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը, իսկ ՌԴ-ում, Ղազախստանում, Վրաստանում՝ գրանցման պահից⁹⁵:

Հիմնականում բոլոր երկրներում նախընտրական քարոզչությունն ավարտվում է քվեարկությունից 1 օր առաջ: Այդ ժամանակահատվածում թեկնածուները նախընտրական քարոզչության հնարավորություն են ստանում: Քարոզչությունը պետք է կատարվի օրենքով չարգելված ձևերով:

Նախորդ բաժնում արդեն նշեցինք բոլոր պատգամավորության թեկնածուների նախընտրական քարոզչություն կատարելու հավասար իրավունքի մասին: Առաջ անցնելով՝ շեշտենք, որ նախընտրական քարոզարշավի անցկացման կազմակերպչական ձևերը բազմազան են, և կարևոր է, որ թեկնածուն և նրան աջակցող խումբն իրավունք ունեն ինքնուրույն որոշել իրենց քարոզչության բնույթը և ձևերը: Օրենսդրությամբ միայն սահմանվում է նախընտրական քարոզչության կազմակերպման կարգը, որի պահանջների խախտման դեպքում պատգամավորության թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում:

Այսպես, Հայաստանում, ըստ << ընտրական օրենսգրքի 19 հոդվածի՝ նախընտրական քարոզության ընթացքում արգելվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական և այլ գերակայության քարոզումը, ռասայական, ազգային կամ կրոնական թշնամանք հրահրող նյութերի հրապարակումն ու տարածումը:

Իսկ ՈՂ-ում և Վրաստանում հատուկ նշված են, որ արգելվում է նաև իշխանությունը բռնի գրավելու, պատերազմի և երկրի ամբողջականությանն սպառնացող կոչերը։ Բացի դրանից,

⁹⁴S̄lu նոյն տեղում, էջ 211, 21:

⁹⁵ Տես «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օռենքի հ.53-ի կետ 1-«Նա՛ ծի է՛ շա՛ ի և Շօ»։ Էջ 158, «Պազալսարանի

ԴՐԱ ՊՐԵՄԻԱՄ ՕՐԱԿՐՈՆԻ Ա.35-Ի ԳԱՎԱՐԻ 1-ՆԱԽ ՕՐ ՀԵ ՉԱՅԻ ԻՐԱ ԸՆ, ԷՎԼԱ, «ՀԱՎԱՄԱՍՆԱՐ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՄ ԸՆՄՈՒՐՈՂՊՐԵՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ հ.36-ՆԱՇ ԾԻ Է Ե ԵՇԱԵՇԱՃԱՅԻ Մ ԾԱԵԻ Ի Ի Ա ԻՆՇԱԻ ՕՅԻ ՃՃԱՅԻ Մ Ե Ե Ա Ի ՆՈ՛ ՇԻ Ե Ա ՋՈ՛ Ի Մ », էջ 95:

ՈՌ-ում արգելվում է նաև սոցիալական թշնամանք հրահրող և մտավոր սեփականության մասին ՈԴ օրենսդրությունը խախտող քարոզը⁹⁶:

Նախընտրական քարոզչությունը կարող է անցկացվել զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական հրապարակային միջոցառումների ձևով (նախընտրական ժողովների և ընտրողների հետ հանդիպումների, նախընտրական հրապարակային քննարկումների, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր, ցուցեր կազմակերպելու միջոցով), տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով:

Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչությունն իրականացվում է հրապարակային բանավեճերի, կլոր սեղամների, մամուլի ասուլիսների, հարցումների, քաղաքական գովազդի և օրենքով չարգելված այլ ձևերով:

Ծատ երկրներում զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու համար ընտրական օրենսդրությամբ թեկնածուներին և կուսակցություններին երաշխավորվում է հավասար պայմաններ⁹⁷:

Որպես զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հավասար պայմաններ նկատի է առնվում բոլոր անվճար եթերաժամի, տպագրական մակերեսի իրավունքների իրավունքների հավասարություն, վճարովի եթերաժամից, պարբերական մամուլից օգտվելու հնարավորություն ունեցող բոլոր թեկնածուներին, կուսակցություններին ցուցաբերվող հավասար մոտեցում (տպագրական մակերեսի, եթերի տևողության, եթեր դուրս գալու ժամի, վճարի չափի) և այլն:

Հայաստանում կուսակցությունների, համանասնական ընտրակարգով ցուցակներ առաջադրած կուսակցությունների և մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուների հասանելիությունը ԶԼՍ-ներին նույնը չէ: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համանասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունները պետական ռադիո-հեռուստատեսությամբ հավասար պայմաններով անվճար և վճարովի եթերաժամների (այդ թվում ուղիղ եթերով) իրավունք ունեն: Ազգային ժողովի՝ համանասնական ընտրակարգով ցուցակներ առաջադրած կուսակցություններին պետական ռադիո-հեռուստատեսային անվճար եթերաժամ տրամադրելու կարգը սահմանում է << կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Մինչդեռ, մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների այդպիսի իրավունք օրենքը չի ամրագրում:

Կարծում ենք, այդ սահմանափակումը ոչ թե պատգամավորության թեկնածուների իրավունքների հավասարության սկզբունքի խախտում է, այլ մեծապես ուղղված է կուսակցական ինստիտուտի զարգացմանը՝ հաշվի առնելով ժողովրդավարացման

⁹⁶ Տես «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.60-ի կետ 1-«Նաև ծի է չափ ի ա ԵՇ», էջ 163 և «Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին» Վրաստանի օրգանական օրենքի h.43-ի կետ 1:

⁹⁷ Տես մանրամասն ՀՀ ընտրական օրինագրի h.18-ի կետ 3-4, «ՈԴ Պետական դումայի և Դաշնային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օրենքի 55-57 հ.հ.-«Նաև ծի է չափ ի ա ԵՇ», էջ 158-162, «Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին» Վրաստանի օրգանական օրենքի 47 հոդված և այլն:

գործընթացներում քաղաքական ինստիտուտների կայացման կարևորությունը: Իհարկէ, հաշվի են առնվել նաև որոշ տեխնիկական բարդություններ:

Նշենք նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 20 հոդվածի համաձայն՝ պատգամավորության թեկնածուները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուները, կուսակցությունները »իրավունք ունեն հավասար պայմաններով օգտվելու նաև պետական, տեղական ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերից«:

Եթե հաշվի առնենք, որ տեղական ռադիոն և հեռուստատեսությունը, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, որպես կանոն, պետական հիմնարկություններ չեն, ապա զանգվածային լրատվության միջոցներին պատգամավորության թեկնածուների հասանելիության հնարավորությունը կախված է նաև այդ միջոցների սեփականության ձևից:

ՈՂ-ում, ի տարբերություն Հահաստանի, միամանդատ ընտրատարածքներում առաջադրված թեկնածուները և ընտրական միավորումները, ընտրական բլոկներն ունեն ԶԼՍ-ներին հասանելիության ընդհանուր հավասար պայմաններ:

Այսպես, ՈՂ-ում ռադիոհեռուստահաղորդումներ սփռող կազմակերպությունները և պարբերական իրավարակումների խմբագրությունները պարտավոր են ապահովել միամանդատ ընտրատարածքներում առաջադրված թեկնածուներին, ինչպես նաև ընտրական միավորումներին, ընտրական բլոկներին, որոնք գրանցել են թեկնածուների դաշնային ցուցակներ, նախընտրական քարոզչություն կատարելու հավասար պայմաններ, այն դեպքում, եթե վերոնշյալ կազմակերպությունների, խմբագրությունների հիմնադիրները պետական մարմիններ, հիմնարկություններ են կամ ընտրությունների պաշտոնական նշանակման մասին հայտարարության օրվան նախորդող տարվա ընթացքում դրանց բյուջեի ոչ պակաս, քան 15%-ը ֆինանսավորվել է ՈՂ պետական իշխանության դաշնային մարմինների, ՈՂ սուբյեկտների պետական իշխանության դաշնային մարմինների հատկացրած միջոցներից:

Այլ հիմնադիրներ ունեցող ԶԼՍ-ները կարող են պայմանագրային հիմունքներով տրամադրել եթերաժամ կամ տպագրման մակերես: Այս դեպքում, Հայաստանի օրինակով, պատգամավորության թեկնածուների նախընտրական քարոզչության հավասար իրավունքն արտահայտվում է վճարման հավասար պայմանների ամրագրմանք, այսինքն՝ վճարը պետք է բոլորի համար նույնը լինի և իրականացվի ընտրական հիմնադրամներից:

ՈՂ-ում ընտրությունների վերոնշյալ սուբյեկտների՝ ԶԼՍ-ներին հասանելիության հնարավորությունը, բացի վերջիններիս սեփականության ձևից և ֆինանսավորման աղբյուրից, կախված է նաև հնարավոր մասնագիտացումից, սփռման շառավղից, տարածման մակերեսից (ՈՂ սուբյեկտների կեսից ավելին (նաև կեսը) ընդգրկող կամ կեսից պակասն ընդգրկող): Վերջին դեպքերում միաժամանակ հաշվի է առնվում նաև սեփականության ձևը և ֆինանսավորման աղբյուրը⁹⁸:

⁹⁸ Մանրամասն տես «ՈԴ Դաշնային ժողովի Պետական դրումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈԴ դաշնային օրենքի h.55-«Նա՛ ծի է՛ չա՛ ի ա՛ Ե՛», էջ158-159:

ԶԼՄ-ներով նախընտրական քարոզչությանը վերաբերող բոլոր հարցերը »Ո՞՛ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« օրենքում հանգամանալից և մանրակրկիտ դիտարկվել են, և ստացել ամբողջական, համապարփակ օրենսդրական լուծում՝ ի տարբերություն Հայաստանի, որտեղ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ է լուծում որոշ հարցեր:

Մեր խորին համոզմամբ, նախընտրական քարոզչությանը վերաբերող հարցերը՝ հաշվի առնելով դրանց բազմաբնույթությունը և ընդգրկունությունը, լավագույնս կարող են կարգավորվել օրենքի մակարդակով:

Ուշադրության է արժանի այն դրույթը, ըստ որի Վրաստանում ԶԼՄ-ներին հասանելիության հավասար պայմաններ ունեն ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունները և ընտրական բլոկները: Այսպես՝ 1999թ. հոկտեմբերի 1-ի փոփոխություններով և լրացումներով՝ »Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին« Վրաստանի օրգանական օրենքի 47 հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ »աբետական հեռուստատեսությունը և ռադիոն պարտավոր են անհատույց տրամադրել օրական 3 ժամ երեր, որը հավասարապես բաշխվում է ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունների և ընտրական բլոկների միջև«: Յուրահատուկ պահանջ է ամրագրված Վրաստանի օրենսդրությամբ, համաձայն որի արգելվում է պետական հեռուստառադիոնկերություններին վաճառել իրենց եթերաժամը: Մասնավոր հեռուստառադիոնկերությունների կողմից կամավոր տրամադրվող եթերաժամը (ինչպես վճարովի, այնպես էլ անվճար) պետք է հավասարապես բաշխվի ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունների և ընտրական բլոկների միջև:

Հայաստանում, «Հնատրական օրենսգրքի 18, 20-21 հոդվածների համաձայն՝ հրապարակային նախընտրական միջոցառումների (նախընտրական ժողովներ և հանդիպումներ ընտրողների հետ, հրապարակային նախընտրական քննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր, ցուցեր) և տպագիր նյութեր հրապարակելու ձևով նախընտրական քարոզչության իրավունքի հավասարությունն ապահովվում է համապատասխան անվճար տարածքներ, հատուկ տեղերում հավասար մակերեսներ տրամադրելու և այլ միջոցներով:

Գրեթե բոլոր երկրների ընտրական օրենսդրություններով նախընտրական քարոզչության ժամանակ պատգամավորության թեկնածուներին, նրանց լիազոր ներկայացուցիչներին, վստահված անձանց արգելվում է ընտրողներին կաշառելը: Օրինակ՝ Հայաստանում, «Հնատրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է անձանք կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ, կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

Վրաստանում, ի տարբերություն Հայաստանի, »Վրաստանի ընտրությունների մասին« Վրաստանի օրգանական օրենքի 47 հոդվածից բխում է, որ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ժամանակ արգելվող գործողություններն սպառիչ չեն,

մասնավորապես՝ »արգելվում է ... մատակարարել կամ անհատույց տարածել ցանկացած ապրանք, բացի սույն օրենքով նախատեսված քարոզչական նյութերից ...« :

Ո՞Դ-ում, բացի վերոնշյալ դեպքերից, »Ո՞Դ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« դաշնային օրենքի 48 հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ թեկնածու կամ թեկնածուների ցուցակներ առաջադրած բոլոր սուբյեկտներին, թեկնածուներին, նրանց ներկայացուցիչներին արգելվում է նաև նախընտրական քարոզչության ընթացքում զբաղվել բարեգործական գործունեությամբ⁹⁹:

Պատգամավորության թեկնածուների իրավական կարգավիճակի կարևորագույն հիմնահարցերից մեկը կարող ենք համարել նախընտրական քարոզչության ֆինանսավորումը¹⁰⁰:

Նախընտրական քարոզչության անցկացմանը չխոչընդոտելու համար օրենքով սահմանվում են գրանցված պատգամավորության թեկնածուների գործունեության երաշխիքները, որոնցից են ընտրություններին մասնակցելու ժամանակահատվածում թեկնածուի անձեռնմխելիությունը, աշխատանքից, զորակոչից ազատվելը, աշխատատեղի պաշտպանումը, տրամապորտի որոշ տեսակներից անվճար օգտվելը և այլն:

Այսպես, պատգամավորության թեկնածուներին քաղաքական շարժառիթներով հնարավոր կամայական քրեական հետապնդումներից զերծ պահելու նպատակով գրեթե բոլոր երկրներում ընտրական օրենսդրությունը հռչակում է նրանց անձեռնմխելիությունը:

Մասնավորապես, Հայաստանում, «Հ ընտրական օրենսգրքի 111 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընտրությունների ժամանակահատվածում կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները կարող են կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, իսկ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները՝ միայն մարզային ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Վերը նշված հանձնաժողովներն այդ հարցի վերաբերյալ որոշում ընդունում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով, ինչը լրացուցիչ երաշխիք է անկախ և անաշար որոշում ընդունելու համար:

Նույն կարգն է սահմանված նաև Ռուսականայում¹⁰¹:

Իսկ Ղազախստանում պատգամավորության թեկնածուների անձեռնմխելիության սահմաններն ավելի նեղ են: Այսպես՝ »Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին« Ղազախստանի օրենքի 52 հոդվածի համաձայն՝ թեկնածուներին չի թույլատրվում ձերբակալել, կալանավորել, ենթարկել հասարակական պարսավանքի կամ քրեական հետապնդման՝ առանց համապատասխան ընտրական հանձնաժողովի գրավոր

⁹⁹ Մանրամասն տես "Նա՛ ծի է՛ չա՛ ի ա Թ՛՛", էջ158-159

¹⁰⁰ Հատուկ նշենք, որ այդ հարցի կարևորությունից և տարբեր երկրներում օրենսդրական կարգավորման բազմազանությունից ելնելով՝ այն առանձին, համապարփակ ուսումնասիրման կարիք ունի:

¹⁰¹ Տես «Ռուսականայի ժող. պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.30-«Նա՛ ծի է՛ չա՛ ի ա թ՛՛ Օ՛ ձձա՛ ի է Ա՛ ո՛ ։ Ա՛ ի է Ա՛ ի ն », էջ 318:

համաձայնության: Սակայն թեկնածուները կարող են ձերբակալվել հանցանքի վայրում բռնվելիս՝¹⁰²:

Այս հարցի կարգավորումն իր յուրահատկություններն ունի նաև Վրաստանի, Բուլղարիայի, Ալբանիայի, ՈՂ ընտրական օրենքներում:

Մասնավորապես, »Վրաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին« Վրաստանի օրգանական օրենքի 46 հոդվածի համաձայն՝ Խորհրդարանի անդամության թեկնածուն, մինչ ընտրությունների արդյունքների ամփոփումը չի կարող Ենթարկվել քրեական պատասխանատվության, ձերբակալվել, կալանավորվել կամ խուզարկվել առանց դատախազության մարմինների տեղեկատվության հիման վրա տրվող՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքի, եթե պատգամավորության թեկնածուն ձերբակալվել է հանցանքի վայրում: Այս դեպքում դատախազության մարմինները պարտավոր են անհապաղ տեղեկացնել կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Եթե կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի տալիս իր համաձայնությունը, ապա ձերբակալված կամ կալանավորված պատգամավորության թեկնածուն անհապաղ ազատվում է:

Հետաքրքիր է, որ Բուլղարիայում պատգամավորության թեկնածուները դատական կարգով չեն կարող ձերբակալվել կամ հետապնդվել, բացառությամբ նախկինում լուրջ հանցագործություն կատարած անձանց՝¹⁰³:

Իսկ Ալբանիայում՝ »Ալբանիայի Հանրապետության ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին« օրենքի 62 հոդվածի համաձայն, պատգամավորության թեկնածուները չեն կարող հարցաքննվել, կալանավորվել կամ ձերբակալվել, բացառությամբ պատգամավորության թեկնածուի կողմից ծանր հանցագործություն կատարելու դեպքի՝¹⁰⁴.

»ՈՂ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« ՈՂ դաշնային օրենքի 49 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ պատգամավորության թեկնածուն իր անձեռնմխելիությունից կարող է գրկվել (քրեական պատասխանատվության Ենթարկվել, կալանավորվել կամ դատական կարգով վարչական տույժի Ենթարկվել) միայն գլխավոր դատախազի համաձայնությամբ, որը պարտավոր է այդ մասին անհապաղ իրազեկել թեկնածուին գրանցած ընտրական հանձնաժողովին՝¹⁰⁵.

Հաշվի առնելով Հայաստանում ընտրական հանձնաժողովների կազմավորման քաղաքական սկզբունքը, նպատակահարմար է, որ պատգամավորության թեկնածուներին անձեռնմխելիությունից գրկելիս պահանջվի Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համաձայնությունը:

Պատգամավորության թեկնածուների գործունեության հաջորդ երաշխիքը՝ *աշխատանքից ժամանակավորապես ազատվելն է*:

¹⁰² Մանրամասն տես նոյն տեղում, էջ 98:

¹⁰³ Տես «Ազգային Ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհուրդների անդամների և քաղաքապետների ընտրությունների մասին» Բուլղարիայի օրենքնի h.50-Նոյն տեղում, էջ 51:

¹⁰⁴ Տես նոյն տեղում, էջ 21:

¹⁰⁵ Մանրամասն տես "Նա՛ Ծ՛ է՛ չա՛ ի ա Թ՛՛, էջ 156:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունում այն թեկնածուները, ովքեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ են գրանցվելուց հետո, գրանցման օրվանից մինչև ընտրությունների ընդհանուր արդյունքների պաշտոնական հրապարակման օրը՝ իրենց դիմումի հիման վրա, ազատվում են իրենց պրոֆեսիոնալ (պաշտոնական) պարտականությունները կատարելուց (արձակուրդ են գնում): Իսկ Ուսասատանի Դաշնությունում, Մոլովայում, Ուկրաինայում, Չեխիայում, Վրաստանում, Բելառուսում, Սլովակիայում, Ղազախստանում այդպիսի դրույթ սահմանվում է պատգամավորության բոլոր թեկնածուների համար:

Հետաքրքիր է, որ իրենց հիմնական աշխատանքից ազատվելու դեպքում՝ ՌԴ-ում, Ուկրաինայում, Չեխիայում, Ալբանիայում, Վրաստանում, Բելառուսում, Սլովակիայում, Ղազախստանում այդ՝ հիմնական աշխատանքից ազատված, ժամանակահատվածի համար պատգամավորության թեկնածուները, որպես կանոն, ստանում են դրամական փոխհատուցում: Սակայն դրանց չափերը և տրամադրման կարգն այդ երկրներում տարբեր են:

Օրինակ, ՌԴ-ում այդ դրամական փոխհատուցումը չի կարող լինել ավելի, քան օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկը:

Ալբանիայում սահմանափակում գոյություն չունի, և պատգամավորության թեկնածուներն իրենց աշխատավարձն ստանում են ամբողջությամբ:

Վրաստանում, ընդհակառակը, գործատուն կարող է պահպանել թեկնածուի միջին ամսական աշխատավարձը:

Իսկ Չեխիայում թեկնածուն վճարվում է միայն իր պահանջի դեպքում: Այն թեկնածուները, որոնք չեն աշխատում, վարձատրվում են պատգամավորության թեկնածուների ցուցակներում իրենց ընդգրկած կուսակցությունների կողմից:

Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքում դրամական փոխհատուցման մասին խոսք չկա, բայց ընտրություններին մասնակցելու ժամանակահատվածը, ինչպես այլ երկրներում, թեկնածուի համար համարվում է աշխատանքային ստաժ այն մասնագիտությամբ, որով նա աշխատել է մինչև գրանցվելը:

Պատգամավորության թեկնածուների գործունեության երաշխիքներից է նաև թեկնածուներին գորահավաքներից, ժամկետային գինվորական ծառայությունից և ուսումնավարժական հավաքներից ազատելը՝ մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը: Նույնատիպ դրույթ է սահմանված նաև երիտասարդ ժողովրդավարության գրեթե բոլոր երկրներում¹⁰⁶:

¹⁰⁶ Մանրամասն տես «ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՌԴ դաշնային օրենքի h.49-«Նâî ծí էê չâêî î î ԵÔ», էջ156, «Խորհրդարանի ընտրությունների մասին» Մոլովայի օրենքի h.47, «Ուկրաինայի ժողովական պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.29, «Չեխիայի Ազգային խորհրդ ընտրությունների մասին» օրենքի h.53, «Ալբանիայի ժողովրդական ասամբլեայի ընտրությունների մասին» օրենքի h.61, «Քենառատիք Հանրապետության Գև պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.44, «Սլովակիայի Ազգային խորհրդի ընտրությունների մասին» օրենքի h.52, «Բուլղարիայի Ազգային ասամբլեայի անդամների, մունիցիպալ խորհրդների անդամների և քաղաքապետների ընտրությունների մասին» օրենքի h.49, «Խորհրդարանի անդամների ընտրությունների

Պատգամավորության թեկնածուների գործունեության հաջորդ երաշխիքը՝ աշխատատեղի պահպանումը, նույնպես ընդունված ստանդարտ է: Այս նույնն է մեր կողմից ուսումնասիրված գրեթե բոլոր երկրներում:

Այսպես՝ ՈՂ-ում, Ղազախստանում և այլ երկրներում պատգամավորության թեկնածուները նախընտրական քարոզչության ժամանակ չեն կարող առանց իրենց համաձայնության ազատվել աշխատանքից կամ տեղափոխվել այլ աշխատանքի: Ավելին՝ Բելառուսում պատգամավորության թեկնածուին, բացի վերոնշյալից, արգելվում է, առանց նրա համաձայնության, ուղարկել երկարատև գործուղման¹⁰⁷:

Ցավոք, ՀՀ ընտրական օրենսգրքում նմանատիպ դրույթը ամրագրված չէ:

Պատգամավորության թեկնածուների գործունեության տարածված երաշխիքներից է նաև շատ երկրների ընտրական օրենսդրություններով սահմանված՝ տրամսպորտային որոշ միջոցներից անվճար օգտվելու պատգամավորության թեկնածուների արտոնությունները¹⁰⁸:

Պատմական հանգամանքներից ելելով, Լիտվայի Հանրապետությունում բացարիկ ընտրական պահանջ է սահմանված, որի նմանը չկա որևէ այլ երկրում: Այսպես՝ Եթե Մեյմի պատգամավորության թեկնածուն գիտակցաբար համագործակցել է արտասահմանյան պետությունների հատուկ ծառայությունների հետ, որի արդյունքում չի իրականացրել Լիտվայի Հանրապետության հանձնարարությունները, նա պետք է հրապարակայնորեն հայտարարի այդ մասին: Այդ փաստը պետք է նշվի պատգամավորության թեկնածուի նախընտրական պաստառներում կամ թեկնածուների ցուցակ ներկայացնող քաղաքական կազմակերպությունների նախընտրական պաստառներում: Ընդ որում, Եթե պատգամավորության թեկնածուն իրաժարվում է սահմանված կարգով վարվելուց, նրան չեն գրկում քվեարկվելու իրավունքից: Սակայն, Եթե ընտրություններից հետո այդպիսի համագործակցության (որը չի վերաբերում Լիտվայի Հանրապետության հանձնարարություններին) հանգամանքը հաստատվում է, ապա հաջորդ օրվանից դադարեցվում են պատգամավորության թեկնածուի լիազորությունները¹⁰⁹:

Պատգամավորության թեկնածուի պահիվ ընտրական իրավունքի իրականացման կարևոր երաշխիքներից է նաև բոլոր երկրների ընտրական օրենսդրություններով սահմանված պատգամավորության թեկնածուների իրավունքը՝ մինչ քվեարկությունը հանել իրենց թեկնածությունը: Սակայն էական տարբերություններ կան այդ իրավունքի իրագործման

մասին»Հունգարիայի օրենքի h.47-«Նայ ծի ե՛ էշանձաձանձ ն օ չաե՛ ի ա նօձա՛ Օա՛ ձձանձ ի է Ա՛ նօ՛ չ ի է Ահձ ի ս ", էջ 169, 332, 379, 21, 39, 293, 51, 75:

¹⁰⁷ Տես «ՈՒ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈՒ դաշնային օրենքի h.49-«Նայ ծի ե՛ չաե՛ ի ա Ե՛Շ», էջ 156, «Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» օրենքի h.52, «Բնակչության Գև պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.44 «Նայ ծի ե՛ էշանձաձանձ ն օ չաե՛ ի ա նօձա՛ Օա՛ ձձանձ ի է Ա՛ նօ՛ չ ի է Ահձ ի ս ", էջ 98, 39:

¹⁰⁸ Տես «ՈՒ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՈՒ դաշնային օրենքի h.49-«Նայ ծի ե՛ չաե՛ ի ա Ե՛Շ», էջ 156, «Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» օրենքի h.53, «Բնակչության Գև պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի h.45-«Նայ ծի ե՛ էշանձաձանձ ն օ չաե՛ ի ա նօձա՛ Օա՛ ձձանձ ի է Ա՛ նօ՛ չ ի է Ահձ ի ս ", էջ 98, 39:

¹⁰⁹ Տես «Անյմի ընտրությունների մասին» Լիտվայի օրենքի h.84-«Նայ ծի ե՛ էշանձաձանձ ն օ չաե՛ ի ա նօձա՛ Օա՛ ձձանձ ի է Ա՛ նօ՛ չ ի է Ահձ ի ս ", էջ 131:

ժամկետների, մեխանիզմների, ընտրական քարոզության ընթացքում կատարված ֆինանսական ծախսերի փոխհատուցման կարգի միջև:

Օրինակ՝ Հայաստանում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուն իր թեկնածությունը հանելու իրավունքը կարող է իրագործել ոչ ուշ, քան ընտրություններից 10 օր առաջ, ՈՂ-ում՝ ոչ ուշ, քան 3 օր առաջ, Զեխիայում՝ 2 օր առաջ, իսկ Ղազախստանում և Վրաստանում՝ գրանցված թեկնածուներին այդ հնարավորությունն օրենքով ընդհանրապես ընդձեռված չէ: Ընդ որում, Հայաստանում, ՀՀ ընտրական օրենսգրքի 111 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ թեկնածուի կողմից իր թեկնածությունը հանելու դեպքում՝ ընտրական գրավը և նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ինքնաբերաբար փոխանցվում են պետական բյուջե:

ՈՂ-ում, ըստ »ՈՂ Ղաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին« դաշնային օրենքի 51 հոդվածի՝ եթե պատգամավորության թեկնածուն իր թեկնածությունն հանում է առանց հարկադիր հանգամանքների, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովը պարտավոր է նրանից գանձել նախընտրական քարոզության համար դաշնային բյուջեից հատկացված միջոցները¹¹⁰:

Հատուկ նշենք, որ պատգամավորության թեկնածուների ներկայացուցիչների (վստահված անձանց, աջակցող խմբերի և այլոց) իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը, ինչպես նաև, պատգամավորության թեկնածուների ընտրական իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերլուծությունն ինքնուրույն, համապարփակ ուսումնասիրման կարիք ունի:

¹¹⁰ Մանրամասն տես "Նաî ծí էê չà êî î î Ô", էջ 157: